ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԵՐՆ ՈՒ ՏՈՆԵՐԸ

ՆՈՐ ՏԱՐԻ (ԱՄԱՆՈՐ)

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի:
Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ. թ. ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ: Բառը կազմված է նավա/նոր և սարդ/տարի բառերից և նշանակում է Նոր տարի:
18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ): Միայն 20–րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը: Հիշատակվում են տոնի տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար, Կալանտար: Նոր տարուն նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Խլվլիկ, Կախ կամ Կաղ անուններով, իսկ համշենահայերի մոտ՝ Ծաղկըմուտ:
Նոր տարին սկսվում էր դեկտեմբերի 30 - 31-ին՝ ամանորյա խմորեղեն պատրաստելով: Խմորեղենի մեջ ամենագլխավորը «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փուռնիկ» և այլ անուններով ծիսական հացն էր: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրատոմսերը, ձևը տարբեր էր: Այն կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն: Կարող էր զարդարված լինել զանազան զարդանախշերով, ընկույզով, չամիչով, սերմերով, պտուղներով: Գլխավորն այն է, որ հացի մեջ որևէ նշան էր դրվում՝ կորիզ կամ լոբի կամ ուլունք, ավելի հաճախ՝ դրամ: Տարի հացը տարբեր տեղերում տարբեր օր են կտրում՝ տարեմուտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին, հունվարի 5-ին՝ ճրագալույծին, հունվարի 6-ին՝ ծննդին: Ըստ մատենագիտական նյութերի, հնում «Տարի» հացը բաժանել են 12 մասի՝ իբրև 12 ամիսների խորհրդանշան: Բաժանել են նաև տան բոլոր անդամների թվին հավասար: Հաճախ բաժին են հանել նաև տան կենդանիներին, արտին, հանդին: Ում բաժին ընկներ նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար:
«Տարի» հացից բացի թխում էին զանազան ձևերի ու մեծության այլ խմորեղեններ, որոնք ունեին կանխատեսելու նպատակ, ինչպես նաև հմայական խմորեղեններ: Վերջիններից էին, օրինակ, կլոր, մեջը ծակ, ցորենով ու գարիով զարդարված «հացի հոր», «գարու հոր» կոչվող խմորեղենները: Թխում էին ընտանիքի եկամուտը

խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն՝ արոր, գութան, խնոցի, մկրատ, մատնոց, ուրագ և այլն, որևէ ցանկություն խորհրդանշող պատկեր՝ քսակ, պայտ, կողպեք, հասկ: Շատ տեղերում թխում էին մարդակերպ թխվածքներ, որոնք կոչվում էին «Ասիլ-Բասիլ», «Վասիլ»: Սրանք խորհրդանշում էին բնության մեռնող ու հարություն առնող աստվածներին՝ Նարին, Արա գեղեցիկին: Մարդակերպ հացիկների աչքերի, բերանի կրծքին դրված ձեռքրի վրա չամիչներ էին դնում: Թխվելու ընթացքում դրանց ուռելը կամ սմքելը դրական կամ բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար:
Զևավոր հացերով ոչ միայն գուշակություններ էին անում, այլև շնորհավորում էին միմյանց տոնը և դրանցով «կաղանդում» ջուրը: Նոր տարվա նախորդ գիշերը կանայք և երիտասարդ տղամարդիկ իջնում էին գյուղի աղբյուրը և կաղանդում ՝ շաղ տալով նրա մեջ սերմեր, պտուղներ կամ թրջելով ծիսահացերը: Հավատում էին, որ ճիշտ կեսգիշերին ջրի տեղ աղբյուրից ոսկի է հոսում (ընդամենը մի պահ) և աշխատում էին հենց այդ պահին աղբյուրից ջուր բերել:
Թիֆլիսահայերը թխում էին երկու հաց, որոնք կոչվում էին «Էգ» և «Չիք»: «Էգը» ողջ տարին պահում էին ալյուրի մեջ, որ ալյուրը շատանա, իսկ «Չիքը» գցում էին հոսող ջուրը, որ չարիքը անցնող ջրի նման չքանա:
Նոր տարվա նախորդ օրն ու գիշերը 10 -12 տարեկան տղաների խմբերը շրջայց էին կատարում համագյուղացիներին: Նրանք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Երգերի տեքստի միջոցով գովերգում էին ընտանիքի անդամներին, տունը, հղում էին բարեմաղթանքներ և թվում իրենց սպասելիքները տանտերերից: Երբեմն իրենց սպասելիքները արտահայտում էին Գալանտոսի, Հարսի, Նորի անունից, որոնք Նոր տարվա ծիսական կերպարներ էին: Նորը, Հարսը, Գալանտոսը եկել է՝ լրիվ նոր ու առատ, շալե շապիկով ու կարմիր գոտիկով, եկել է որպես Նոր տարի և համեստորեն համաձայն է «մեկ ավուճին»: Տանտիկինները կախված տոպրակի մեջ դնում էին մրգեր, հատուկ այդ նպատակով թխված խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն:
Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում հայտնի էր «Կախու», «Կախուկ» կամ «Գոտեկախի» սովորույթը, որն արևելյան Հայաստանում հայտնի էր նաև «Ճլոլանք» անվամբ. երիտասարդ աղջիկներն ու պատանիները Նոր տարվա նախորդ գիշերը փոքրիկ խմբերով տոպրակներ, գուլպաներ կամ կողովներ առած շրջում էին երդիկից երդիկ և դրանք պարանով երդիկից ցած իջեցնելով՝ բարեմաղթանքի երգեր էին ասում ու շնորհավորում տնեցիներին: Տանտիկինը կախվածի մեջ զանազան ուտելիքներ էր լցնում: Արցախում և Սյունիքում գոտեկախի սովորույթը հայտնի էր հակառակ տարբերակով: Պատրաստում էին ընկույզի, չոր մրգերի ու եփած հավերի շարան, որը կոչվում էր «Ճլոլունք», և իջեցնում էին հարազատների, իսկ ավելի հաճախ՝ խնամիների երթիկից ցած:
Նոր տարվա գիշերը Նոր Նախիջևանցիները վախենում էին «Խոնջոլոզների» և «Առայիմ-թառայիմ» երևալուց: Խոնջոլոզները չարդախներում ապրող էակներ էին, պատռված հագուստներով, որոնց ծվեններից երկաթե գնդեր էին կախված: Եթե նրանց

հաջողվում էր որևէ մեկին բռնել, նստում էին նրա վրա և ճնշում իրենց ծանրության տակ: Առայիմ-թառայիմները կարող էին մտնել հնոցների ծխնելույզից և դուրս գալ վառարանի դռնից: Սրանք պատկերացվում էին երկաթե երկար եղունգներով, երկար ու սպիտակ մազ-մորուքով և հիշեցնում էին պարսկահայերի «Խլվլիկը»:
Որոշ տեղերում հմայում-հեռացնում էին բոլոր չարիքները: Տան անդամներից մեկը, բարձրանալով տան տանիք, փայտով, կացնով կամ այլ իրով աղմուկ էր բարձրացնում: Ներքևից մեկը հարցնում էր.
- Ի՞նչ ես անում:
- Ցավ եմ կտրում:
- Ու՞ր պիտի ուղարկես:
Վերևինը տալիս էր որևէ հեռու երկրի կամ տեղի անուն, ուր ուղարկվում էր նշված վատ բանը: Այսպես երկխոսությունը շարունակվում էր այնքան, մինչև տան առկա և հնարավոր դժբախտությունները, կարիքները, չարիքը ուղարկեին, հեռացնեին: Պոնտոսի շրջանում տանտերը մի ջիթենու ճյուղ էր կտրում բերում տուն՝ իբրև կաղանդի ծառ, զարդարում կաղիններով ու ընկույզներով, իսկ առավոտյան տանում էր եկեղեցի՝ քահանային օրհնել տալու:

Նոր տարվա տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Ընդհանրապես, Նոր տարվա սեղանին պարտադիր էին 7տեսակ միրգը և 7ճաշատեսակները: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Տան մեծը բարձրացնում էր բաժակը, օրհնում սեղանը, շնորհավորում տնեցիների Նոր տարին և առաջարկում բոլորին՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել.- «Անուշ մեղր ուտենք, որ տարին բոլոր անուշ զրուցենք, անուշ վարվենք»: Որոշ տեղերում ընթրիքն սկսելուց առաջ տան գլխավորը երեք բուռ կաղին, ընկույզ էր նետում դեպի տանիք «Շեն կենա Կալանտար, բարով Կալանտար ըլլա» խոսքերով, վստահ, որ նետված կաղին-ընկույզը առաջիկա տարվա առատությունը պիտի ապահովի: Ամբողջ գիշեր տան ճրագը չէր մարում: Ընթրիքից հետո սկսվում էին տոնական այցելությունները: Որոշ տեղերում այդ այցելությունները կատարվում էին առավոտյան: Տան դուռը տոնական օրերին չէր փակվում: Վաղ առավոտյան տան մեծը մատուցարանի մեջ շարում էր հաց, գինի, մեղր և 4 խնձոր, որոնց վրա մեղրամոմ էր վառվում: Մատուցարանը տանելով տան չորս անկյունները, նա ասում էր. «Անուշ արեք, ովքեր չեք երևում, նորհավոր Նոր տարի»: Ապա դուրս էր գալիս և աղոթում Աստծուն, խնդրելով, որ ամբողջ տարին իր տան համար ավցնի այնպես քաղցրությունով, ինչպես քաղցր է մատուցարանը, տուն մտնում, տան բոլոր անդամներին հրավիրում ճաշակելու հացից ու մեղրից, ասելով՝ «Էսպես քաղցր պառավես»: Վերջապես մեղրից խաչաձև քսում էր դռան ճակատին և վառված մեղրամոմի ծխով սևացնում քսած տեղը, մի կարմիր շոր կապում և, ներս մտնելով, երեխաներին բաժանում նրանց համար թխված խմորեղենները:

Երեխաների սիրված խաղերից էին վեգը և ընկուզախաղերը: Գետնին փոքրիկ փոսեր են փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ առանց նշանակված գծից շեղվելու՝ ընկույզն ընկներ մի փոսի մեջ: Հաջողվածը բոլոր

գլորած ընկույզները յուրացնում էր: Մեկ այլ խաղում խաղացողները մի մետր տրամագծով շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք – չորս մետր հեռավորությունից գցում էին վեգերը՝ աշխատելով խփել ընկույզներին և գոնե մեկը դուրս հանել շրջանից, որով և շահում էին շարված բոլոր ընկույզները:

Որոշ տեղերում ընկույզից պատրաստում էին «Չարխափաններ»՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Նախօրոք վերցնում էին 20 – 25 սմ երկարության թելեր, հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում կեղևների արանքը և սոսնձում: Երբեմն կեղևների մեջ էին լցնում ցորեն կամ այլ մանր հատիկներ: Մի քանի այդպիսի ընկույզների թելերը կապում էին իրար, որն էլ դառնում էր «Չարխափան»: Երբ այն թափահարվում է, շրխկում է: Հենց այդ շրխկոցն էլ «վախեցնում և քշում է չարին»:

Նոր տարվա օջախն առանձնահատուկ էր, երբ նորոգվում էր կրակը, իսկ շատ տեղերում մի մեծ քոթուկ էին դնում օջախի մեջ՝ աստիճանաբար առաջ մղելու պայմանով այնպես, որ մինչև ծնունդ կրակն անմար մնար: Բոլոր դեպքերում անմար էր պահվում Նոր տարվա գիշերվա և հաջորդ օրվա՝ հունվարի 1-ի օջախը: Ավելի ուշ, ծննդյան երեկոյին վերցնում էին այդ քոթուկից մնացած խանձողները, տանում հանդերում թաղում, որպեսզի ապահովեին բերքի առատությունը, կանխեին կորուստը, կարկուտը:

Հայ ազգային ծեսերն ու տոները

Նոր տարի (Ամանոր)

Վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Գարնան սկզբին բնությունն արթնանում է, հայ մարդը որոշել է, որ այդ օրը տարվա սկիզբն է:

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը(նավա-նոր, սարդ-տարի), որն համընկնում է այժմյան օգոստոսի 11-ի հետ, և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը:

18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի մեկը: Տոնն ունեցել է տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալանտար, Կալոնտար:

Տոնական սեղանին դրվող ամենագլխավոր խմորեղենը «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փյունիկ» և այլ անուններով ծիսական հացն էր: Այն կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն:

Նոր տարվա նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան երեխաները խմբերով շրջայց էին կատարում համագյուղացիներին: Նրանք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Գովերգում էին ընտանիքի անդամներին, բարեմաղթանքներ հղում: Սովորաբար տոնը, ծեսը ուներ ծիսական կերպար(կերպարներ), որի(որոնց) անունից

արտահայտում էին իրենց սպասելիքները տանտերերից: Տանտիկինները կախված տոպրակի մեջ դնում էին մրգեր, խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն:
Պոնտոսի շրջանում տանտերը մի ձիթենու ճյուղ էր կտրում բերում տուն՝ իբրև կաղանդի ծառ, զարդարում կաղիններով ու ընկույզներով, իսկ առավոտյան տանում էր եկեղեցի՝ քահանային օրհնել տալու:

Տոնը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Սեղանին պարտադիր դրվում էր 7 տեսակ միրգ, 7 ճաշատեսակ և այլ ուտեստներ: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Ընթրիքից հետո սկսվում էին տոնական այցելությունները:

Երեխաների սիրված խաղերից էին վեգը և ընկուզախաղերը:
- Գետնին փոքրիկ փոսեր էին փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ որ առանց նշանակված գծից շեղվելու, ընկույզն ընկներ փոսի մեջ: Ում հաջողվում էր անել, բոլոր գլորած ընկույզները նրանն էին:
- Խաղացողները մի մետր տրամագծով շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում էին վեգերը: Եթե թեկուզ մեկն էին շրջանից դուրս հանում, շահում էին շարված բոլոր ընկույզները:

Որոշ տեղերում ընկույզից պատրաստում էին «Չարխափաններ»՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Վերցնում էն 20սմ և ավելի երկարություն ունեցող թելեր, մեկ ծայրը հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում կեղևների արանքը և սոսնձում: Մի քանի այդպիսի ընկույզների թելերը կապում էին իրար, որն էլ դառնում էր «Չարխափան»: Հայ մարդիկ հավատում էին, որ այդ շրխկոցը «վախեցնում և քշում է չարին:»

ԾՆՈՒՆԴ / ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ/

Նոր տարուն հաջորդում են Ծնունդ (Աստվածահայտնություն), Զրօրհնեք (Մկրտություն) տոները: Մեր եկեղեցին Սուրբ ծնունդը նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է ս. Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Քրիստոսը Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա 30 տարին: Այդ պատճառով Հայոց եկեղեցին Սուրբ ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում է միևնույն օրը: Հունվարի 5-ի երեկոյան վառում են եկեղեցու բոլոր կանթեղները, մատուցվում է Ճրագալույցի ս. Պատարագ: Հետաքրքիր է, որ ճրագալույցի ս. Պատարագ տարին ընդամենը 2 անգամ է մատուցվում՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներին: Ճրագալույց նշանակում է ճրագ, /մոմ/ լուցանել, այսինքն՝ վառել: Այդ օրը մարդիկ եկեղեցում վառված ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու

օրհնություն: Ճրագալույծը խորհրդանշում է բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոգերին դեպի Հիսուս Մանուկ:

Հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան Պատարագից հետո, կատարվում է նաև Ջրօրհնեքի արարողություն: Ջուրն օրհնվում է սուրբ Խաչով, Սուրբ Ավետարանով և Մյուռոնով: Հավաքվածներն անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում են իրենց ձեռքերը, քսում մարմնի հիվանդ մասերին՝ համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց: Այս հանդիսությունը նկատի ունենալով էլ ժողովուրդը այդ տոնն անվանել է «Ջրօրհնեք» կամ «Խաչը ջուրը գցել»:

Հունվարի 5-ի երեկոն բոլոր հայ ընտանիքներում թաթախման երեկո էր, երբ, ժամերգությունից վերադառնալով, պասը բացում էին ծննդյան տոնին ընդունված ճաշատեսակներով: Ժամերգությունից տուն դարձողներն իրենց հետ տանում էին այնքան մոմ, որքան անդամ կար տվյալ ընտանիքում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի առաջ վառում էին նրա համար նախատեսված մոմը և , մոմերի լույսի ներքո, բոլորում սեղանի շուրջ: Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված խորտիկներն էին՝ խաշած, տապակած, ձկով կարկանդակ, խորոված ձուկ և այլն: Դրվում էին նաև բրնձի, ձավարի, արիշտայի խառը կամ անխառն փլավները՝ առատ յուղով օծված, ալյուրից պատրաստված ու դոշաբով կամ մեղրով քաղցրացրած խաշիլը, սիսեռով ու չորացրած բանջարեղենով ապուրը, որ հայտնի է «Մայրամա ճաշ» անունով:

Ընտանիքը նոր էր բոլորած լինում ընթրիքի սեղանի շուրջ, երբ սկսվում էր «Ավետիս» երգող խմբերի այցը: Սպիտակ շապիկ հագած պատանիների 3-5, երբեմն՝ 6-7 հոգիանոց խմբերը շրջում էին տնետուն: Առջևից գնում էր «շուն թակողը»՝ մահակը ձեռքին, (սա պետք է քշեր հարձակվող շներին), նրան հետևում էին «ալյուր տանողը»՝ տոպրակը շալակին, «ձու հավաքողը»՝ թասը գլխին և մյուսները: Նրանցից մեկը կամ երկուսը մտնում էին տուն, իսկ մյուսները բարձրանում էին տան տանիքը և երդիկից պարանով կամ գոտիներով կախում տոպրակ կամ գուլպա կամ քթոց (սալա): Երգում էին «Ավետիս», որոնք շատ բազմազան էին: Դրանցում դրսևորված էին Քրիստոսի ծննդյան ու կյանքի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները, գովերգվում էին Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները և այլն: Սակայն կային Քրիստոսի հետ կապ չունեցող երգեր, որոնցում հնչում էր ընտանիքին արվող բարեմաղթությունների թեման, և, այնուամենայնիվ, որպես ծննդյան երգեր, դրանք նույնպես կոչվում էին «Ավետիսներ»: Բոլոր երգերը վերջանում էին «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզի, ձեզի մեծ ավետիս» խոսքերով: Ավետիս պտտողներին գյուղացիները տալիս էին ձու, յուղ, դրամ և ուրիշ նվերներ:

Ամանորյա և ծննդյան երգեր

- Ձեր տան սներ ծառ ին խնկի,

Պատեր շարուկ մարմար քարեն,
Ալաշ վերեն ծալ-ծալ ոսկի,

Խողն ի վերեն սուրբ մարգարիտ,
Խարսներ ինի՝ քանց աղունակ,
Ավելն ի ձեռ՝ փունջ մանուշակ,
- Ձեր անդրանիկի անուն ի՞նչ ի:
- Արամ ի:
- Արամ ճութ էր, էլ ճթացավ,
Քանց բարդի ծառ էլ հերկնցավ,
Քանց ուռի ծառ էլ կանաչավ,
Քանց կաղնի ծառ էլ պնդացավ,
Ճղեր թալեց քաղքե-քաղաք,
Ամեն ճղին՝ ջուխտմ ճրագ,
Արամ նստեր ծառի տակին,
Գավաթն ի ձեռ նռան գինին:

- - Ձեր տուն մտնի խազար բարի,
Հաճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը խորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք՝ լիքը տնով:

- - Մամիկ, մամիկ, ես քե ծառա,
Դուռ մառանին մեկ գյավ արա,
Սոլեր խազի, որ ճռվռա,
Կութնին խազի, որ խշխշա,
Մաղմ կոքյով, մեկ էլ չամիչ,
Բեր տղեքներ ճամբխու արա:

ալաշ - ծղոտ
ինի - մեջ
ճութ - ամուր
գյավ – քայլ
կութնի – մետաքսյա շրջազգեստ
կոքյով – ընկույզ

- Ծառ մի կանչեր, ծառ մի կանչեր, ավետիս,
Շարոց բերեք, պաստեղ բերեք, ավետիս,
Մեր հարսներուն փայն ալ բերեք ավետիս,
Գինի բերեք, գաթա բերեք, ավետիս,

Չիր ու չամիչ հետը բերեք, ավետիս,

Ամեն տարի հասնինք բարով, ավետիս,
Երկար կենոք, առողջ անձով, ավետիս,
Մի կենաք հետ մարդու խռով, ավետիս,
Այլ խոսեցեք անուշ լեզվով, ավետիս,
Որ դուք մնաք երկար ամով, ավետիս:

- Այսօր տոն է ծննդյան, ավետի՜ս,

Աշխարհ լցվավ լիություն, ավետի՜ս,
Մեր տերն էլավ նախատակ, ավետի՜ս,
Տժողքն էլավ խորտակ, ավետի՜ս,

Ապա մեղեդին փոխվում էր.

Մարիամն կենաց տուռն հերին, ալելույա՜,
Ծնավ, պիրեց Հիսուս որդին, ալելույա՜,
Քրիստոս որդի կյրկանոցին, ալելույա՜,
Քյավոր՝ Սիմոն խերն արեցին, ալելույա՜:

Սրան հաջորդում էր հարց. – Ինչպե՞ս է ձեր փոքրիկի անունը:
-Գրիգոր:
-Գրիգորի ճութ ճըթացավ, ալելույա,
Քյանց բարդի ծառ հերկնցավ, ալելույա,
Խեր կերավ՝ խպարտացավ, ալելույա,
Մեր կերավ՝ զվարթացավ, ալելույա,
Քյոր կերավ՝ խորոտկցավ, ալելույա,
Ախպեր կերավ՝ հայլորցավ, ալելույա,
Մամիկ կերավ՝ ջրհելցավ, ալելույա,
Պապիկ կերավ՝ անմախացավ, ալելույա,
Խորքուր կերավ՝ գյումրախացավ, ալելույա,
Խորոխպեր կերավ՝ գյումրախացավ, ալելույա,
Քեռաղեն կերավ՝ առողջացավ, ալելույա,
Քեռմամեն կերավ՝ բախտավորցավ, ալելույա,
Մորքուր կերավ՝ ինգավ թոնիր, կոտն իրիցավ, ալելույա,
Քյանիմ կերան՝ չպստկցավ, ալելույա, չպստկցավ, ալելույա:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

(Դոռոնջ, Տըրընդեզ, Տերընդեզ, Տերինտազ, Տերընտաս, Տերինտէս,

Դառդառանջ, Տանտառեջ, Տառընտաս , Տառինջ – Տառինջ,
Դռնտառունչ, Տոռոնջ – Տոռոնջ, Տառինջ – Տառինջ,
Տերինտառաջ, Դոռոնջ, Տենդառաջ, Դրնդեզ)

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է:
Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը «Տեառնընդառաջ»՝ Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Հեթանոսական կրոնների մեջ մեծ տեղ էր գրավում կրակի պաշտամունքը: Կրակը խորհրդանիշն էր Արևի և Լույսի, ինչպես նաև՝ ջերմության: Կրակը համարվում էր նվիրական սրբություն: Ընտանեկան բույնը, երդիկը կոչվում է նաև օջախ, ծուխ: Սովորաբար Տյառնընդառաջի հրավառությունը վերագրվում է հայոց Տիր, ինչպես նաև Միհր աստծուն: Տիրը երազների մեկնիչն էր և պաշտպանը՝ դպրության ու արվեստի, իսկ Միհրը մարմնավորում էր կրակի ու լույսի ուժը: Տոնի գլխավոր նպատակն էր՝ կրակի միջոցով ազդել սառնամանիքների վրա և զորացնել արևի ջերմությունը:
Արարողությունները եկեղեցում սկսվում են երեկոյան ժամերգությամբ, որից հետո արգելվում է՝Լույս զվարթ՝ շարականը: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն:

Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Հին Ջուղայում փշե դեզը եկեղեցու գավթում պարտավոր էին պատրաստել նույն տարում պսակված երիտասարդները: Հանդիսակատարության ժամանակ նույն երիտասարդները, վառ մոմերը ձեռքում, շարքով կանգնում էին դեզի առաջ: Երբ քահանան, կարգը կատարելով, իր մոմով առաջինը վառում էր դեզը, նրանից հետո իսկույն վառում էին նորապսակները, և այլևս ոչ ոք:
Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով: Դեզը վառելու միջոցին հրացաններով կրակում են, որոնց ձայնից շները վախենում են և մի կողմի վրա փախչում: Փախած կողմով էլ որոշում են այդ տարվա հողային առատությունը: Շիրակում և Բասենում էլ դեզը վառելու իրավունքը տրված էր նորապսակներին: Վաղարշապատում և շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը դրրընդեզի տոնին հրավիրում էր աղջիկներին և հարսներին: Քավորը բռնում էր նորապսակ տղայի ձեռքից, որն էլ բռնած էր լինում նորահարսի ձեռքից, և երեք անգամ պտտում դեզի շուրջ, ապա երեք անգամ թռնում էին խարույկի վրայից: Կրակի վրայից թռնելը

նպատակ ուներ ազատվել չլավից (ոչ լավ, չար բան): Նույն նպատակով էլ վառում էին շորի մի մասը, փեշը: Հավաքվածներն ուշադիր հետևում էին ծխի ուղղությանը. այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին:
Անցյալում նորահարսերը ճյուղերի վրա տարբեր գույների կտորներ՝ լաթեր էին կապում, որևէ իղձ պահում մտքում և այդ ճյուղը գցում եկեղեցու բակում վառվող խարույկը: Քանի դեռ կրակը վառվում էր, կանայք մի սկուտեղի վրա լցրած փոխինդը, աղանձը, չամիչը, ընկույզը, կարմրացրած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում էին, պտտվում կրակի շուրջը, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում: Կրակի մոտ շատերը փոխինդ էին շաղախում մեղրով կամ դոշաբով: Տարեկան երկու անգամ՝ Տյառնընդառաջին և Ս. Սարգսին շաղախած փոխինդ ճաշակելն ուղղակի անհրաժեշտություն էր:

Խարույկը մարելու հետ նորապսակ ունեցող ընտանիքների բակերում սկսվում էին պարերը: Այդ ընթացքում շատերը բակի խարույկից թիակով կամ որևէ ամանով կրակ էին վերցնում և պտտեցնում տան շուրջը: Խանձողներ էին գցում հավաբունը, գոմը՝ թռչուններին ու անասուններին ապահովելով չարիքների ներգործությունից:

Մեծ կարևորություն ուներ նաև Տյառնընդառաջի խարույկի մոխիրը: Այն, ըստ պատկերացումների, օժտված էր բուժող ու առատացնող զորությամբ: Այն լուծում էին ջրում և խմեցնում հիվանդներին, ծննդկանին՝ որ հեշտ ազատվի, քսում էին երեխաների վզին ու դեմքին, որ «լուսնի նորից» չազդվեն, չհիվանդանան: Ձյունը թաթախում էին մոխրի մեջ և ուտում, որ ամռանը դողերոցքով չհիվանդանան, մոխիրը աղի հետ խառնելով կերցնում էին անասուններին: Գարնանը մոխրից շաղ էին տալիս արտերում, ու մուկը ցանքսը չկտրի, շաղ էին տալիս հավաբնում, գոմում: Շատերն այդ մոխիրը պահում էին և ամեն անգամ հաց թխելիս մի պտղունց գցում թոնրի կրակի մեջ:

Տյառնընդառաջի երեկոյան ծնված երեխան շատ չար ու կրակոտ է լինում, որովհետև «կրակի հետ է ծնվել»:

Այս տոնից հետո գյուղերում անասնակերը խնայողաբար էին գործածում: Տաք, արևոտ օրերին ոչխարը հանում էին չոր խոտ արածելու, իսկ խոշոր եղջերավոր անասուններին, կովերից բացի, այլևս խոտ չէին տալիս, կերակրում էին միայն դարմանով: Խորտը նրանց պետք էր գարնանացանի ժամանակ, երբ լծկան անասուններին հարուստ կեր պիտի տային:

- Տերընդեզ՝ դարմանը կես,

Առ հաց ու կես, ելիր գեղես,
Տերընդեզ, մխի դին տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես:

- Տերընդեզ՝ դարմանը կես,

Առնիմ մանգաղ՝ ելնիմ խոտի դեզ,
Տերընդեզ՝ փեշդ վառե,

Օր ազատվես օձէ, չարէ:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

- Ահա եկավ հայոց ազգին օրերը,

Հանեցեք հիները, հագեք նորերը:

- Բարեկենդան, փորեկենդան,

Բարեկենդան օրեր է,
Խելքս գլխես կորեր է...

- Մե օր բարեկենդան, տաս օր անոթի:

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:
Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով:

Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային («հայոց ազգի օրեր»), ինչպես նաև ամենաերջանկաբեր, խրախճանք, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Այդ օրերին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում: Նախապատվությունը տրվում էր մսեղենի, կաթնեղենի, յուղի առատությանը: Տավարի, ոչխարի և թռչնեղենի մսից պատրաստում էին զանազան ճաշատեսակներ: Առաջին օրերին պատրաստում էին մեծ քանակությամբ գաթա ու հալվա: Երեկոյան ուտում էին կաթնապուր, մածուն, խաշած ձու: Պատրաստում էին փաթիլա, սրոն, բխբխիկ: Որոշ տեղերում նախապատվությունը տրվում էր փորը ձավարով ու զանազան համեմունքներով լցոնած և թոնիրում ամբողջովին խորոված ոչխարին կամ

տվյալ վայրում առավել սիրված կերակրատեսակներին: Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որով սկսվում էր տոնը և երկու շաբաթ պատրաստվում բոլոր տներում: Տանտիկիններն իրենց պահած մթերքներով շռայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին և հյուրերին: վերջին օրը, երեկոյան, կաթնապուր ու մածում էին ուտում, վրայից՝ խաշած ձու, ասելով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»,- ակնարկելով, որ ահա սկսվում է Մեծ պասը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Զատիկ: Որոշ տեղերում ձուն խաշելու փոխարեն ձվածեղ էին պատրաստում:
Տոնին պատրաստվում և մասնակցում էին բոլորը՝ մեծ, թե փոքր: Չնայած ամենուր դեռ ձյուն էր, ցուրտ, սակայն դա չէր խանգարում, որ մարդիկ անձնատուր լինեն զվարճություններին: Երկու-երեք օր առաջ կանայք և տղամարդիկ դադարում էին աշխատել, զանազան խաղեր էին խաղում, զվարճանում երեխաների պես: Ծերունիները, առանց քաշվելու միանում էին այս կամ այն խմբին՝ «թոփ» խաղալու: Երիտասարդները «սուրմագիլի» կամ «կունդի» էին խաղում:
Շատ տարածված էր ճլորթին կամ ճոճախաղը: Թաղի երիտասարդությունը սովորաբար խաղատեղ էր ընտրում բարձր ու դիմացկուն գերաններ ունեցող գոմ: Որանի սայլի ճոպանը կախում էին հեծանից և նրա երկու օղակների վրա դնում 2 մետրանոց տախտակ: Գետնից մի մետր բարձր այդ տախտակի ծայրին հաճախ աղջիկ ու տղա էր կանգնում: Ճոճախաղերը հաճախ վեր էին ածվում մրցախաղերի՝ ով ավելի մեծ կորագծով կճոճվի: Լռռիում, փոքրերի մի փոքր ճոճվելուց հետո, տան նանեին բերում, նստեցնում էին ճլորթուն, որ «եղ աներ»: Նանի նստելուց հետո հարսները նրա գոգը մի քար էին դնում և, փոխանակ ճոճելու, պտտեցնում էին, թոկը ոլորում, որ հետո բաց թողնելիս հակառակ կողմի վրա էր պտույտ գալիս: Այդ միջոցին պառավը քարը գոգից վայր էր գցում՝ ասելով. «Էսքան եղ ինձ»: Հարսներից մեկը քարն իսկույն վերցնում և կրկին դնում էր նանեի գիրկը, որ պառավը, վերստին պտույտ գործելուց հետո, քարը նորից գցելով՝ ասեր. «Էսքան եղ էս հարսիս», և այսպես շարունակ, բոլոր հարսների համար, որպեսզի շատ յուղ ունենային:
Տարոնում բարեկենդանյան խաղերից վերջինը «կշռեցուկ»-ն էր: Առաստաղի գերաններից կապված մի երկթաթանի ճոճանակի մեջ նստելով՝ կշռվում էին ընկերներն ու ընկերուհիները՝ մյուս տարվա Բարեկենդանին իմանալու համար, թե «արդյոք իրենց կյանքից անցնող տարին, որ պատված էր ամբողջ հոգսերով, ո՞րքան հալել ու մաշել, ծյուրել ու ցամաքացրել է իրենց անձը»:

Բարեկենդանի օրը մինչև իսկ չքավորներն ու աղքատներն էին վայելում տոնական սեղանը: Այդ օրը հիշում էին նաև պանդխտության մեջ գտնվողներին ու երգում էին հատուկ տաղեր: Այդ օրվա խնջույքը շատ տեղերում ջնջում էր բոլոր տարբերությունները. «Իրար հետ սեղան էին նստած ծերունի սկեսարը ու մանկամարդ հարսը, տղամարդ, կնիկմարդ, բոլորը միասին վայելում են գաթա, հալվա, լոխում, հավկիթ, հասութա, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հավ, սագ, գառ, ոչխարի կամ կովի դավուրմա, քյուֆթա, տոլմա, փլավ, յախնի...»,- այսպես էր ավարտվում Բարեկենդանը Զավախքի պահպանողական հայերի մոտ:

Հարսանիքներն ու նշանդրեքները Բարեկենդանի անբաժան ուղեկիցներն էին: Դրանք, իրենց հերթին, նոր թափ էին հաղորդում տոնի ուրախությանը: Ուրախ պարերը Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին: Պարերը սկսվում էին առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ դառնում ինչպես կատարողներով, այնպես էլ հանդիսատեսներով, խրախուսողներով: Հատկապես վերջին շաբաթ – կիրակի օրերը դրանք դառնում էին համընդհանուր, համագյուղական, համաթաղական: Պարում էին ինչպես զուռնա - դհոլի նվագի տակ, այնպես էլ պարերգերի, որ բազմաթիվ էին:

Բարեկենդանի գլխավոր զվարճությունը, սակայն, դիմակավոր խաղերն ու թատերական ժողովրդական ներկայացումներն էին (առհասարակ, դեռ հնագույն ժամանակներում, տոնախմբությունների, թատերական ներկայացումների կամ որսորդության ընթացքում հայերը դիմակ հագնելու սովորություն ունեին): Ներկայացումների ժամանակ ծիծաղախառն կատակներով քննադատության էին ենթարկվում մեծավորներն ու իշխանավորները: Հավաքվում էին մեծ ու փոքր, մի կողմ էին դրվում պետական կամ եկեղեցական օրենքները, ամեն մարդ առանց քաշվելու ասում էր իր խոսքը: Նույնիսկ եկեղեցին է այդ օրը խստակենցաղ հոգևորականների համար սահմանել որոշ ազատություն: Փաստորեն, Բուն Բարեկենդանը, բացի խրախճանքից, կեր ու խումից, նաև ազատության օր էր: Երեկոյան, երբ խնջույքներից հոգնած մեծերը հավաքվում էն տանը, դուռը թափով բացվում էր և աղմուկով, երգով, թմբուկով ներս էր ընկնում դիմակավորված երեխաների խումբը: Տղաները հագած էին լինում աղջիկների հագուստ, փոքրերը՝ մեծի, երբեմն՝ ծաղրածուի: Արտաքինը պիտի հնարավորին չափ ծիծաղաշարժ լիներ, դեմքերին դնում էին ծիծաղելի դիմակներ կամ մուր, ալյուր քսում, ածուխով ներկում: Երեխաները տեսարան էին ներկայացնում գյուղի կյանքից կամ խաղում էին որևէ սրամիտ սյուժե («Բեկ ու զզիր», «Պարոն զզիր», «Գող և փաշա» և այլն): Մեծահասակների սյուժեներն, անշուշտ, ավելի բարդ էին: Նախ, Բարեկենդանի օրերին եկեղեցին նշում էր Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան զորավարի տոնը: Այդ օրերին հայոց տարբեր ազգագավառներում հաճախ էին ներկայացնում Ավարայրի ճակատամարտի որևէ դրվագ:

Շատ էին կատարվում կենցաղային թեմաներով թատերախաղեր: Օրինակ, «խնամախոս» գնալու ներկայացումը. դերակատարները կանացի զգեստով տղամարդիկ են՝ անճանաչելի կերպով դիմակավորված: Խմբում մեկը առանձնանում է հումորով, ճարտարախոսությամբ: Խումբը գալիս է մի տուն, որտեղ հարսնացու աղջիկ չկա, սակայն կան երիտասարդ տղաներ կամ երիտասարդ կանայք: «Խնամախոսները» սկսում են բանակցությունները, խաղի մեջ ներքաշվում են տան անդամները: Խնամախոսները խնդրում են իրենց ներկայացնել«հարսնացուին»: Հարսնացուի փոխարեն դերակատարներին ներկայացնում են տան տղային կամ նույնիսկ տանտիրուհուն: Զավեշտացույցի ժամանակ նյութը ծավալվում է, դուրս գալիս խնամախոսության շրջանակներից, միմյանց հումորով լուրեր են հաղորդում, չարախոսում ուրիշներից: Խաղի պայմանն այն է, որ ներկայացման ընթացքում

հնարավորին չափ շատ զվարճախոսեն իրական կյանքից, սակայն դերակատարները պիտի չճանաչվեն տանտերերից: Զանգեզուրում այդ խաղի տարբերակներից մեկն էր «Հարս»-ը: Բոլոր դերերը այս դեպքում կատարում էին տղաները: Նրանցից մեկը հագնում էր կնոջ ու տղամարդու խառը հագուստ և կատարում փեսայի դերը: Մյուսը հարսի հագուստով էր: Հարս ու փեսին ուղեկցում են նվագածուները: Նվագում են հիմնականում շվի: Ծափերի, աղմուկ - աղաղակի տակ հարսն ու փեսան պարելով շրջում են փողոցներով, ապա մոտենում են որևէ մեկի տանը: Աղմուկից տնեցիները դուրս են գալիս: Որոշ ժամանակ պարելուց հետոուղեկցողներից մեկը փայտի թրով խփում «սպանում» է հարսին կամ փեսային: «Սպանվածը հարություն է առնում» միայն այն ժամանակ, երբ տանտերերը նրանց համապատասխան մթերքներ են տալիս՝ ձու, ալյուր, պանիր, կաթնասեր, միս և այլն: Խումբը շարունակում է իր այցերը՝ հաճախ ստվարանալով յուրաքանչյուր հանդիպումից:

Բարեկենդանին խաղացվող թատերա-զվարճախաղերից մեկը, սակայն, խիստ ընդհանրացած էր Հայաստանի բոլոր գավառներում: Դա «Փաշա», «Քյոխվա», «Շահ-շահ», «Խան», «Ղադի»(դատավոր) և այլ անուններով հայտնի ներկայացումն էր, որի գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը օտար բռնակալի ու կոնկրետ հայկական համայնքի հանդիպման ծաղրապատկերն էր:

Մարաշի հայերի սիրված ներկայացումներից էր «Թլխաղիր»-ը: Կանայք բահը կամ թին հագցնում էին կնոջ, բայց հատկապես նորահարսի հագուստ, գլուխը հարդարում զանազան քողերով ու ծածկոցներով. այս մարդ-տիկնիկը կոչվում էր «թլխաղիր»: «Թլխաղիրին» այնուհետև հագցնում էին իրենց զարդերը և կատակերգերով պտտվում գյուղի թաղերում՝ տնետուն: Այդ օրը ամեն թաղում կարող էր լինել մի քանի «թլխաղիր»: Զբոսապտույտից հետո «թլխաղիրը» տնկում էին մի բակում և մինչև երեկո շուրջը պարում: Ենթադրվում է, որ ծեսը «թլխաղիր» կոչվում է «թլոհ», «թլահիլ» բայից, որ «ծաղրել» բայի արմատն է:

Երեկոները, ուրախության թունդ պահին, հանկարծ լսվում են կենդանական անճոռնի ձայներ: Դուռը բացվում է, ներս է ընկնում այլանդակ մեկը՝ երեսը ալյուրի կամ մրի մեջ կորած, այծի մորթուց մեծ մորուք շինած, խայտառակ ձևով մորթիներից շորեր հագած, ձեռքին երկար ձող կամ ակիշ բռնած, զանազան թռիչքներ անելով հարձակում է գործում ուրախացողների վրա: Բոլորը թե ծիծաղում են, թե՝ վախենում այդ այլանդակ մեյմունից: Երեխաները, սաստիկ երկյուղից սրտաճաք լինելով, լալիս են, ամուր կպչում մայրերի կրծքին և գլուխները թաք կացնում նրանց թևերի տակ: Բոլորը տեղերից վեր են թռչում, իրար են խառնվում: Եվ վերջապես մեյմունը, տանտիրոջից իր նվերն առնելով, իր բազմաթիվ ընկերներով գնում է ուրիշ տեղ: Մեյմունները (մեկ այլ տեղ նրանց անվանում են «Նոզայ») ներկայացնում են կամ պառավ սատանա, կամ անճոռնի հրեշ, կամ տգեղ ուղտ, կամ սարսափեցնող շվոտ, կամ դև, կամ մի ուրիշ բան:

Կատակով խաղում էին գոմշակռիվ, աքլորակռիվ՝ նմանակելով իսկական գոմշակռիվներին ու աքլորակռիվներին: Բայց շատ ավելի տարածված էր «ուղտ խաղացնելը»: Երկու ուժեղ մարդ, մեկը՝ առաջը, մյուսը՝ ետևը, ուսերի վրա էին առնում

երկու հաստլիկ ձողեր և ամբողջովին փալասով ծածկվում: Քուրջերից շինված, կարկատված ուղտի գլուխ էին ձևացնում և ամրացնում մի բարակ ձողի վրա, որ առջևի մարդը հեշտությամբ կարող էր կրել իր ձեռքին: Սրանց վրա հեծած ուղտապանը, որի երեսը խատուտիկ ներկվում էր, հագնում էր ցնցոտիներ, գլխին դնում քուրջե փաթթոց և ձեռքը երկար, բարակ ու ցեխապատ մի ձող էր առնում: Առջևից ուղտի սանձը քաշող մի պատանի էր լինում՝ նույնօրես սև ներկված երեսով ու ցնցոտիներով փաթաթված: Սրանց առջևից գնում էին նվագածուները: Փողոցներից անցնելիս ուղտը և հետևող թափորը կանգ էր առնում մսագործի ու նպարավաճառների խանութների առջև: Ուղտապանը երկարում էր իր ցախոտ ձողը դեպի միսը, դեպի ցուցադրված ապրանքները և պահանջում՝ առնելով իր ուզածները: Ճանապարհին ուղտին և ուղտամարդկանց գինի էլ էին հրամցնում: Ուշագրավ էր ուղտապարը, որը կատարվում էր հաճախակի քացիներ տալով:

Ախալքալակի Փ, Խանչալի գյուղում երկու կամ երեք երիտասարդ տղաներ, ուղտ ձևացնելու նպատակով, իրար կոնքից բռնում, կռանում էին: Սապատը ձևացնելու համար նրանց մեջքին մի փոքրիկ կողով էին դնում ու հին վերմակով ծածկում: Ապա այդ բոլորի վրա, բուրդը դեպի դուրսն արած, գցում էին ուղտագույն մուշտակներ: Կռացողներից առաջինը վերցնում էր երկարաթաթ մի կացին և մտցնում մուշտակի թևերից մեկի մեջ: Կացնի պոչով ձևացվում էր ուղտի պարանոցը, իսկ թաթով՝ գլուխը: Մուշտակի թևաբերանը մի փոքր կախ էին թողնում, որը ներկայացնում էր ուղտի կախ ընկած շուրթը: Այնուհետև զանգը կախում էին ուղտի պարանոցից, որպեսզի այն հեռվից հեռու ահազանգեր նրա գալուստը:

Ուղտը տեր էր ունենում, որը պարանով սանձում էր և առաջնորդում տնից տուն: Այս ձևով նա մուտք էր գործում գյուղի հատկապես այն տները, որտեղ գիշերային խնջույք և տնային խաղեր կազմակերպած ունևոր ընտանիքները, համախմբված մի տեղ, «բարեկենդան – փորեկենդան» էին անում:

Տիրոջ կողմից առաջնորդվելով գոմի օդաները, ուղտը (առջևի դերակատարը) ուղտանման կառանչում էր և, գլուխն ու պարանոցը զանգով ճոճելով աջ ու ձախ, ահազդեցիկ ձևեր էր անում: Նրա մուտքը իսկույն շեղում էր տվյալ ընտանիքի ժամանցի եղանակը: Երեխաները սարսափահար ընկնում էին մեծերի գիրկը: Կանայք ճչում էին, երբ ուղտը փորձում էր իրենց կծել կամ երեխա «կուլ տալ»: Պատանիները երգեցիկ ձայնով ասում էին.

Մուկը անկաջ ունի,
ուղտը չունի՛,
Մուկը անկաջ ունի,
ուղտը չունի՛...

Եվ, որովհետև ուղտը «հասկանում» էր նրանց այդ արհամարհական խոսքերը, կառանչում, հարձակվում էր նրանց վրա ու ահաբեկում էր: Ուրախ ծիծաղը և ահաբեկման աղաղակները խառնվում էին իրար:

Ուղտը տիրոջ հետևյալ երգով ուղտապար էր խաղում՝ ճոճվում էր, զանգ էր զնգացնում, առաջ էր գալիս ու ետ գնում:

Դավալի՛ ջան, դավալի՛,
Էրկուս քնա, մեկ՝ արի՛.
Դավալի՛ ջան, դավալի՛,
Էրկուս քնա, մեկ՝ արի՛:

Ուղտախաղը տևում էր 10 – 15 րոպե, որի համար ուղտատերը, նախապես պայմանավորված լինելով, տանտիրոջից որևէ նվեր էր ստանում: Երբ ուղտախաղը գյուղում ավարտվում էր, դերակատարները հավաքած միջոցներով խնջույք էին կազմակերպում:

Տարոնում Բարեկենդանին փայտե ձի էին պատրաստում և, համապատասխան զարդարանք տալուց հետո, խմբով շրջեցնում էին գյուղի մեջ:

Բարեկենդանյան ներկայացումների ժամանակ «փակ» թեմաներ, անձեռնմխելի անձեր չկային: Հոգևորականները նույնքան, որքան աշխարհականները, ենթարկվում էին բարեկենդանյան ընդհանուր տրամադրությանը: Վանքերում այդ օրերը կոչվում էին Աբողաթողի օրեր: Ստ. Մալխասյանցի ստուգաբանությամբ՝ բառը կազմված է «աբեղա» և «թողուլ»(թողնել, արձակել) բառերից և նշանակում է աբեղաների թողություն, արձակում վանական խիստ կյանքի կանոններից: Ազգային հինավուրց տոնը այդպես է կոչվել քրիստոնեության հաստատումից հետո, որով հայ եկեղեցին խստակենցաղ հոգևորականների համար սահմանել է որոշ ազատություններ: Այստեղ ևս մուտք են գործել բարեկենդանյան խաղերն ու խրախճանքները:

Բարեկենդանի վերջին օրը խելահեղության են հասնում խնջույքները, պարերը, խաղերը: Բոլորը ջանում են ուտել, վերջացնել բոլոր մսեղեն – յուղեղեն – կաթնեղեն կերակրատեսակները: Աղջիկները ճլորթու վերջին ճոճերն են անում, տղաներն էլ հրապարակ են դուրս գալիս գլխավոր ձիարշավի, որը պիտի ավարտվի «Ուտիս տատին» վոնդելու, «Պաս պապին» հրավիրելու ծեսով: «Ուտիս տատը», որը Բարեկենդանի օրերին կերած – խմած տեսքով բոլորին ուտել – խմելու էր հրավիրում, այժմ արդեն զզգզված, քրքրված տիկնիկ է: Բարեկենդանի վերջին օրը, երեկոյան, հանդիսավոր գլորվում է սարի գլխից՝ այստեղ երիտասարդների բարեկենդանյան վերջին խնջույքը հովանավորելուց հետո: Նրան գալիս է փոխարինելու Պաս պապին կամ Ակլատիզը (Ախելուծ, Ախալոճ, Ախըլոջ, Ախացել, Աքլատիզ, Գոգոռոզ, Խուխուլիճ, Խուլուճիկ, Մոռմոռոզ, Մռմռաս, Մեծպապ, Պապի պուլուլ, Որոջբեկ, Ֆռիկ): Սա իրենից ներկայացնում է մի սոխ կամ կլոր խնձորաչափ կարտոֆիլ՝ վրան յոթ փետուր խրած և թելով առաստաղից կախ տված: Այն առաստաղից կախելիս երգում էին.

- Տատը գնաց շերեփը ձեռին,
Պապը եկավ չոմբախն ուսին:

Կարնոհայերի մոտ այդ տիկնիկը ծերունու տեսքով էր: Այն պատրաստվում էր տղամարդու հագուստով, փարթամ ու սպիտակ բեղ ու մորուքով, միոտանի, որի ծայրին խրվում էր սոխը՝ յոթ փետուրներով, պարզած թևերով, որոնցից քարեր էին

կախվում: Ուրիշները ոլորած ճիպոտի ծայրին գլուխ սոխ էին ամրացնում, սոխի վրա այծի մազից բեղ ու մորուք սարքում, սոխի մեջ յոթ գույնզգույն փետուր խրում: Այն կախելու ժամանակ երեխաները երգում էին.

- Ակլատիզ, չվանը վիզ

Եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս:

Յոթ փետուրները, որ Մեծ պասի յոթ շաբաթներին էր համապատասխանում, յուրատեսակ օրացույցի դեր էին կատարում, յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ փետուրը հանվում էր: Շատերն ամեն շաբաթվա փետուրը հանելիս ուղեկցում էին բնորոշ երգերով: Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին «ճիճու, ճիճվարանքը՝ դուրս, ցորեն, գարին՝ ներս» և ջարդում ու մի կողմ էին նետում փետուրը: Ամենուր Ակլատիզ - Պաս պապին հատկացվում էր պասը հսկող դեր: Այն շարունակ ճոճվում էր կրակի, ծխի և օդափոխության շնորհիվ: Թելը պտտվում էր մեկ՝մի, մեկ՝ մյուս ուղղությամբ, ինչու և Սասունում այն կոչվում էր «ֆռռիկ»: Նրանով վախեցնում էին երեխաներին, որ հանկարծ սրանք Ուտիսի կերակուրներ չուտեն: Զանազան պատմություններ էին պատմում Ուտիս տատի և Պաս պապի հակադրությունների մասին, որն արտահայտվում էր նրանց մշտական վեճով: Ըստ լոռեցիների Պաս պապը լոբոճաշի մեծ շերեփով խփում էր տատի (Ուտիսի) գլխին և դուրս անում տնից այն բանի համար, որ նա երեխաներին յուղալի – մսեղեն կերակուրներով է կերակրում և հոգին տկարացնում գեր մարմնի մեջ: Իսկ պասի վերջում ուրախ և առույգ տատն էր գալիս ու, մածնի յուղոտ շերեփով խփելով Պաս պապի գլխին, դուրս անում նիհար, չորացած պապին: Այնթափցիները, որոնք փետրազարդ սոխը կոչում էին Խուճուճիկ, Մեծ պասի վերջին օրը այն թաթախում էին մածնի մեջ և նետում տանիքը: Ըստ նրանց պատկերացումների, սոխը դառնում էր մկաններ, խռիվը՝ թևեր, ինքը՝ Խուլուճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում - գնում էր՝ հաջորդ տարին վերադառնալու պայմանով:

Մեծ պասի հենց առաջին օրը ամեն տուն թխում էր յոթ հատ անալի բաղարջ՝ ի նշան պասի յոթ շաբաթվա:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը, Շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածկվում է, և այսպես շարունակվում է քառասունօրյա պասի ընթացքում: Պասի ժամանակ մատուցվում է փակ պատարագ. ամուսնություններ տեղի չեն ունենում, արգելվում է մատաղ անել, մինչ թույլատրվում է մկրտություն և նշանդրեք կատարել:

Մեծ Պահքի (պաս) ամեն կիրակին ուներ իր առանձին տոնատերը: Առաջին կիրակին նվիրված էր Արտաքսմանը, երկրորդը՝ Անառակին, երրորդը՝ Տնտեսին, չորրորդը՝ Դատավորին, հինգերորդը՝ Գալստյան, վեցերորդը՝ Ծաղկազարդին և յոթերորդը՝ Քրիստոսի հարությանը: Պասի ընթացքում կենդանական ծագում ունեցող սնունդ չէին ուտում, այլ միայն բուսական:

Բարեկենդանի երգեր

Գնացեք, տեսեք

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել այծը.-
Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:
Գայլն ու այծը,
Այծն ու գայլը.
Ձեզ՝Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել գայլը.-
Գնացին տեսան՝ արջն է կերել գայլը:
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել արջը.-
Գնացին տեսան՝ թուրն է կերել արջը:
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել թուրը.-
Գնացին տեսան՝ ժանգն է կերել թուրը:
Ժանգն ու թուրը,
Թուրն ու արջը,
Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել ժանգը.-
Գնացին տեսան՝ հողն է կերել ժանգը:
Հողն ու ժանգը,
Ժանգն ու թուրը,
Թուրն ու արջը,

Արջն ու գայլը,
Գայլն ու այծը.
Ձեզ՝Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

Էն դիզան

Էն դիզան, բետ - բետ դիզան, տեսեք էն ո՞րն է:
Էն դիզան, բետ - բետ դիզան՝ գեղի ռեսներն են:

Ճնճղներ ճըլվըլալեն, տեսեք էն ո՞րն է:
Ճնճղներ ճըլվըլալեն՝ էն տիրացուքն են:

Էն արև, երկնուց արև, տեսեք էն ո՞րն է:
Էն արև, երկնուց արև՝ էն թագավորն է:

Էն լուսին ամպերու մեջ, տեսեք էն ո՞րն է:
Էն լուսին ամպերու մեջ՝ էն թագուհին է:

Ցախավել իդև դռան, տեսեք էն ո՞րն է:
Ցախավել իդև դռան՝ էն մըշակներն են:

Շունն էկավ պարկն ի բերան, տեսեք էն ո՞րն է:
Շունն էկավ պարկն ի բերան՝ գեղի զզիրն է:

Մուկն էկավ ալրաթաթախ, տեսեք էն ո՞րն է:
Մուկն էկավ ալրաթաթախ, էն ջաղացպանն է:

ԾԱՂԿԱԶԱՐԴ (ԾԱՌԶԱՐԴԱՐ)

Հնագույն շրջանում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, չինարենու, ուռենու պաշտամունք՝ որպես տիեզերքի ներդաշնակության, անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Մեր նախնիները Ատիս աստվածուհու տոնին նվիրված օրը, առավոտյան վաղ, արևից առաջ գնում էին սրբազան անտառ և ծիսակատարությամբ ծառից պոկում մի ճյուղ: Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով: Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառզարդար, որը խորհրդանշել է գարնան գալուստը:
Աստվածաշնչի մեջ կարդում ենք. «Եվ Տեր Աստված արևելյան կողմը՝ Եդեմի մեջ, պարտեզ տնկեց՝ «Եդեմի պարտեզը», ու իր շինած մարդը հոն դրեց: Եվ Տեր Աստված պարտեզին մեջտեղը Կենաց ծառը՝ Բարին ու Չարը գիտենալու ծառն էլ բուսցուց»:

Քրիստոնեության շրջանում վերաիմաստավորված կենաց ծառը նույնացվել է Աստվածածնի հետ, այն առնչվում է խաչի, խաչափայտի, դրախտի հետ:
Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց. մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում.«Օրհնությու՛ն Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով: Խաղաղությու՛ն երկնքում և փա՛ռք բարձունքներում»:
Ծաղկազարդը (Ծառզարդար) Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է: Այդ օրը եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մարդիկ ուռենու բողբոջած ճյուղերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն: Ինչպես Պաղեստինում ձիթենիներն ու արմավենիները, այդպես էլ Հայաստանում տարվա այդ ժամանակ բողբոջում են ուռենիները, բարդիները: Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում էր Երուսաղեմ:
Նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին, արմատախիլ էին անում նոր բողբոջած ուռենիները, ճյուղերը զարդարում գույնզգույն լաթի կտորներով, թելի վրա շարված չամչահատիկներով, մրգերով, եռասայր մոմերով: Նրանք եկեղեցի էին շտապում: Առաջինը տեղ հասնողը խփում էր զանգը, մյուսները գնում էին քահանային արթնացնելու: Ողջ եկեղեցին զարդարում էին ուռենու բողբոջած ճյուղերով, մի մեծ կույտ ճյուղեր էլ դարսում էին կենտրոնում: Եկեղեցու մուտքը ամբողջովին «հավաքում» էին ծաղկե շրջանակով: Նշանված տղաները զարդարված ծառերով կանգնում էին իրենց հարսնացուների առաջ: Մերձավոր կանանցից մեկը ծառի վրա եռասայր մոմ էր վառում ու ընծաներ տալիս նշանվածներին: Այդ ընթացքում անչափահաս տղաներն ու պատանիները, ձեռքերին զանազան ինքնաշեն խաղալիքներ՝ ճեռեր, կարկաչաներ, ճոճանակներ պտտացնելով, աղմուկով էին լցնում եկեղեցին:
Ճոճանակը ձեռքի թաթի չափ, կոթով մի տախտակ է, որի երկու կողմից թույլ կապած են մի-մի տախտակ, որոնք շարժելու, ճոճելու ժամանակ զարկվում են միջին տախտակին:
Կարկաչան բռնցքաչափ խորանարդ է, որ տախտակից է պատրաստվում: Տախտակներից մեկը կոթավոր է լինում, որից և բռնում էին ցնցելու համար: Մի քանի տախտակները վերջանում էին ելուստներով: Մեջը փայտե կամ այլ գնդիկներ էին լցնում, որոնք ցնցումների ժամանակ ձայներ էին հանում:
Ճեռը փայտե ատամնավոր գլան է՝ երկար կոթով: Գլանի երկու կողմերից տախտակներ են անցկացրած, որոնք միանում են ուրիշ երկու տախտակներով, գոտիներով: Մի ուրիշ բարակ տախտակ էլ մի ծայրով հենվում է գլանի ատամների վրա, իսկ մյուս ծայրով, անցնելով երկրորդ գոտիով, ամրանում է առաջի գոտու վրա: Գլանը պտտեցնելիս լեզվակն ընկնում է ատամից ատամ և սուր ձայն բարձրացնում:
Այդ գիշեր Քեսապում յոթը բուրավետ ծաղիկներ էին դնում ջրի մեջ, որ գիշերվա ընթացքում խիստ զորավոր պիտի դառնար: Այդ ջուրը կոչվում էր «Յութնյուս»:

Կիրակի առավոտյան մի լաթի կտորի վրա յոթ շար շուլալ կար էին անում, յոթը թելերը ծայրում յոթ անգամ կապ գցում և լաթը նետում պարտեզ: Առավոտյան լվացվում էին «Յութնյուս»-ի ջրով:
Գալիս էր քահանան, հնչում էին եկեղեցու զանգերը՝ հրավիրելով ուշացածներին: Եկեղեցի եկողները շրջապատում էին ուռենու ծառերը, իրենց հետ բերած մոմերը վառելով՝ կպցնում դրանց ճյուղերին և, հարյուրավոր մոմերի պայծառ լույսի տակ, կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերն օրհնելու ծեսը: Այդ գիշեր, հաճախ, ողջ Մեծ պասի ընթացքում առաջին անգամ, նախնական համաձայնությամբ, նոր զույգերի նշանադրություն էր կատարվում: Եկեղեցում տղայի մայրը ընտրած աղջկա մատին մատանի էր դնում, գլխին՝ գլխաշոր գցում, որից հետո վերջինս նշանված էր համարվում:
Օրհնված ճյուղերով և վառված մոմերով մարդիկ շտապում են գերեզմանատուն, մոմերն ամրացնում իրենց հանգուցյալի գերեզմանաքարին, իսկ օրհնված ճյուղերը տանում էին տուն: Այդ ճյուղերին վերագրվում էր չարխափան, առատացնող զորություն: Մի մասը գցում էին ալյուրի ու ցորենի ամբարների մեջ, իսկ մի մասն էլ՝ հացահատիկի հորերի մեջ, որ այդ տարին առատ բերք լինի, լցվեն ամբարներն ու հորերը: Թեթևակի խփում էին անասուններին, դրանցով հյուսված օղակի միջով անցկացնում էին հավերին, որ գեր լինեն: Խփում էին միմյանց մեջքին ու ասում. «Մեջքը տեղը, կամքը տեղը», «Քամու տեղ, սրտի դեղ»,- հուսալով, որ հիվանդությունները կանցնեն:
Այդ օրը բոլորը պիտի հատիկ ուտեին, նվիրաբերեին տուն այցելող երեխաներին: Տանտիկինները մեծ քանակությամբ խաշած ցորենից, սիսեռից, չամիչից ու շաքարահատիկներից «հատիկ» էին պատրաստում: Երեխաները՝ երկու-երեք հոգով, երբեմն՝ ավելի մեծ խմբով, ճեռեր ճռռացնելով, կարկաչաներ, ճոճանակ շրխկացնելով, օղակած ուռենու ճյուղեր, մի-մի դույլ ու տոպրակ առած՝ շրջում էին տնետուն, ծաղկազարդի երգեր երգում և որպես պարգև ձու ու հատիկ ստանում: Բասենում, օրինակ, երգում էին.

Կարկաչա, կարին քյաչա,
Սև եզան սև սամոդա,
Կարմիր կովը շատ եղ կուտա,
Ով որ ընձի հավկիթըմ տա՝
Աստված իրեն հազար թող տա:

Մակվեցիները երգում էին.

Կարկաջա, կարինկաջա,
Սև եզան սև սամաթեռ,
Կարմիր եզան օղն ու կոճակ,
Ով որ չտա իմ երկու ձուն,

Մուկն ու կատուն՝ իրենց թթուն,
Ով որ կտա իմ երկու ձուն,
Աստված պահե իր փեսացուն:

Աշտարակում հայտնի Ծաղկազարդի երգն էր.

Անակ, անակ, ճոճանակ,
Աստծո դուռը բանանք,
Մտնենք ժամ անենք,
Դուրս գանք, պատարագ անենք,
Չալ եզը մորթենք, մատաղ անենք,
Պոզերը չարդախ անենք,
Միջին նստենք, քյարգահ անենք,
Մատաղ սիրողը երկու ձու տա,
Զատկին խաղանք, քեֆ անենք,
Մինն ինձի, մինն իմ ընկերին,
Ով որ տա՝ զիզի բարձին նստի,
Ով չտա՝ չոր քարին նստի:

Շրջում էին այնքան, մինչև դույլերը ձվով լցնեին: Փոխարենը տալիս էին օրհնված ուռենու մեկական ճյուղ:
Ալեքսանդրապոլում երգում էին.
Ճրռ, ճրռ, ճրչեռնակ.
Ասծո հալալ պիպեռնակ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովեն ելավ ծիրանա,
Խունկ առեք, մոմ առեք,
Տասներկու պատարագ արեք,
Իմ կարմիր հավին հավկիթը դուրս բերեք,
Ով որ բերե՝ շեն մնա,
Ով չբերե՝ հավի փորին դեմ կենա:

Բալուում խաղում էին ծաղկազարդին բնորոշ խաղ: 10 – 12 տարեկան տղաները նախապես հավաքում էին ուռենու կամ բարդու երկար ձողեր, կարմիր ներկում դրանք: խաղացողներից մեկը իր ձողը շեղակի դեմ էր անում պատին, մյուսն իր ձողով հարվածում էր: Կոտրվածը հաղթողին էր բաժին ընկնում: Առավոտից երեկո խաղացողների հարվածների ձայնն էր լսվում և հաղթողների հաղթական գոչյունները: Կոտրվածները պահում էին Զատիկի թանապուրի տակ այրելու համար:

Այնուհետև Մեծ պասի ավարտին մնում էր մեկ շաբաթ, որը կոչվում էր «Ավագ կամ Մեծ շաբաթ»: Այդ օրերին եկեղեցին հիշատակում է Հիսուսի երկրավոր կյանքի վերջին ընթրիքը, մատնությունը, չարչարանքը, խաչելությունն ու թաղումը: Սրան զուգահեռ հասարակ ժողովուրդն ուներ իր արարողությունների կարգը: Ավագ շաբաթվա օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը և, ըստ այդմ, իր բնորոշ դեմքը:

Հուշիկ, հուշիկ երկուշաբթի,
Երեքշաբթի՝ քարքաշիկ,
Չիք չորեքշաբթի
Ավագ հինգշաբթի,
Հուդայի ուրբաթ,
Զատկի շաբաթ,
Ախարի կիրակի,
Երկուշաբթի՝ մեռելոց,
Կանաչ – կարմիր կիրակի:

Երկուշաբթին ջրաղացպանների օրն էր: Այդ օրը բոլորը պիտի ցորեն աղային: Ավագ երկուշաբթին խորհրդանշում է արարչության երկրորդ օրը, երբ Աստված ջրերը բաժանեց միմյանցից և արարեց երկնքի հաստատությունը: Այդ օրը խորհրդանշում է նաև երկրորդ շրջանը, երբ ապականվեց ամբողջ տիեզերքը, և միայն Ենոքը հաճելի եղավ Աստծուն ու երկինք փոխադրվեց (Ծննդ. Ե 21-24):
«Այս օրը Քրիստոսն անիծեց անպտուղ թզենին, և սա իսկույն չորացավ (Մատթ. ԻԱ 18-22): Անպտուղ թզենին օրինակն է ճշմարիտ հավատք ու բարի գործեր չունեցող մեղավորների, ովքեր պատժվելու են վերջին օրը աստվածային հրամանով»:

Երեքշաբթին հիմար – իմաստունի վիճակը քաշելու և խնոցի հարելու օրն էր: Մարդիկ շտապում էին եկեղեցի՝ գուշակելու իրենց մտադրությունը: Տասը թղթակտորներից հինգի վրա գրվում էր «իմաստուն», հինգի վրա՝ «հիմար» բառերը: Տասը երեխա վերցնում էին մեկական թուղթ: Մտքում որևէ իղձ պահած անձինք նախապես ընտրում էին երեխաներից որևէ մեկին: Եթե իր ընտրած երեխային ընկնում էր «իմաստուն» բառը, ուրեմն նշանակում էր իղձի իրականացում, իսկ «հիմար»-ի դեպքում՝ տապալում:
Կանայք առավոտից երեկո խնոցի են հարել: Այդ օրն այնքան խնոցի է հարվել, որքան չի հարվել Մեծ պասի անցած բոլոր օրերին: Պատրաստված կարագի մի մասը, անալի թողնելով, պահել են կճուճներում, որ հինգշաբթի օրը օրհնել տան, այլապես կովերը կաթից կկտրվեն:
«Ավագ երեքշաբթին պատկերն է արարչության երրորդ օրվա, երբ Աստված երկրի վրա դալար բույսեր և պտղատու ծառեր աճեցրեց: Աստված զգալի (նյութական) ծառերի հետ միասին տնկեց նաև իմանալի (հոգևոր) ծառեր՝ արդարների ու սուրբ

մարգարեների դասերը, ինչպես վկայում է Պողոսը. «Աստված ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը» (Եփես.Ա.4):

Ավագ երեքշաբթին նաև երրորդ ժամանակաշրջանի խորհուրդն ունի, երբ ջրհեղեղը ողողեց ամբողջ աշխարհը, և Աստված մարդկանց լեզուները խառնելով՝ նրանց տարածեց աշխարհով մեկ (Ծննդ. Է - ԺԱ)»:

Չորեքշաբթի հիմնովին մաքրել են տները, ամեն վատ, չար, պիղծ, հիվանդություն, կեղտ «չիք են արել»: Շուշեցի աղջիկները այդ օրը խաշխաշ հարելու քարը գետնին են քսել ու ասել.

Չիք, չիք, մուկը չիք,
Չիք, չիք, լուն չիք,
Չիք, չիք, կարիճը չիք,
Չիք, չիք, չարակամը չիք,
Չիք, չիք, հիվանդությունը չիք,
Չիք, չիք, օձը չիք...

Զանգեզուրում չիքը հարց ու պատասխանի ձևով էր արվում: Նախ՝ ամբողջ տունը դատարկել են, ապա կանանցից մեկը, քարը ձեռքն առած, բարձրացել է կտուրն ու երդիկի մոտ կանգնել, իսկ մյուսը՝ տան ներսում՝ երդիկի տակ: Տանիքին կանգնածը քարը տանում էր բերում երդիկի շուրջն ու հարցնում.

- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:
- Մուկն աղա:
- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:
- Քունջ ու պուջախի տակերն աղա...

Մարդիկ հմայական արարողությամբ ձգտել են ոչնչացնել չարը, անցանկալին: «Այդ օրը հիշատակն է արարչության չորրորդ օրվա, երբ Աստված լուսատուներ դրեց երկնքի հաստատության ներսում և դրանով տվեց Արդարության Արեգակի՝ Քրիստոսի ծննդյան ավետիսը: Ավագ չորեքշաբթին նաև պատկերն է չորրորդ ժամանակաշրջանի, երբ Աբրահամը ստացավ Իսահակի ծննդյան ավետիսը (Ծննդ. ԺԸ), հրեաները Եգիպտոսից դուրս եկան (Ելք. ԺԲ - ԺԴ), Վկայության խորանը պատրաստվեց (Ելք.ԻԵ - ԻԷ), և Իսրայելի որդիներն Ավետյաց երկիր փոխադրվեցին (Հեսու Ա - ԺԹ):

Ավագ չորեքշաբթի օրը հիշատակն է նաև Տիրոջ մատնության, որ կատարվեց Նրա աշակերտ Հուդայի կողմից՝ քահանայապետերից ստացած 30 արծաթի դիմաց (Մատթ. ԻԶ 14-16)»:

Ավագ հինգշաբթի այգեպանները, վերցնելով կացինը, այգի են մտել և, վատ բերք տվող ծառերի բնին կացնի բութ կողմով երեք անգամ հարվածելով, վախեցրել. «Բար ես տալու, տուր, թե չէ՝ կկտրեմ»:

Առավոտյան, ի հիշատակ Քրիստոսի ու իր տասներկու աշակերտների խորհրդավոր ընթրիքի, եկեղեցում պատարագ է մատուցվել: Երեկոյան եկեղեցում ոտնլվայի արարողություն է կատարվել՝ ի հիշատակ Քրիստոսի ձեռքով իր աշակերտների ոտքերը լվանալու արարողությանը: Օրհնվել է յուղը, որը ձեռքին պահած տարել են տուն՝ յուղի պուլիկի, խնոցու մեջ գցելու, կովի պտուկներին քսելու՝ վերջինիս կաթնատվությունն ու յուղի առատությունը ապահովելու ակնկալիքով: Ժամերգությունից հետո տեղի է ունեցել նաև Քրիստոսի չարչարանքի ու խաչելության ծիսական արարողությունը, որն հայտնի է «Խավարում», «Խավարման գիշեր», «Սգի գիշեր» անուններով: Եկեղեցում 13 մոմեր են վառել, ապա՝ զույգ-զույգ մարել՝ Ավետարանը կարդալու, շարականներ երգելու ընթացքում: Միայն մեկը՝ մեջտեղի մոմն է վառված մնացել՝ խորհրդանշելով մենակ մնացած Քրիստոսին:
Հինգշաբթի գիշերը դարբինները, մի ոտքի վրա կանգնած, բոլորովին լուռ, մինչ այդ յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթի կտորտանքներից փոքրիկ մատանիներ, ապարանջաններ, հմայիլներ(ուրբաթարուրք) են շինել՝ հաջորդ օրը եկեղեցու դռանը կանգնած՝ անխոս վաճառելու նպատակով:
Ավագ հինգշաբթի օրը նաև Զատկի ձվերը ներկելու օրն էր: Ներկում էին առայժմ սահմանափակ թվով ձվեր, ընտանիքի անդամների թվին հավասար կամ յոթ հատ, դրանցով պիտի թաթախվեին, իսկ բուն Զատիկի համար նախատեսվող հսկայական քանակությամբ ձվերը պիտի ներկվեին - եփվեին շաբաթ օրը: Ներկում էին միայն կարմիր գույնով: Շատ տեղերում հավատում էին, որ Զատկի հինգշաբթի օրը ներկած ձու ուտողների ատամները չեն ցավի:

«Ավագ հինգշաբթի օրը պատկերն է արարչության հինգերորդ օրվա, երբ Արարիչը ստեղծեց ձկներին ու թռչուններին:

Այս օրն ունի նաև հինգերորդ ժամանակաշրջանի խորհուրդը, երբ Իսրայելի զավակները կերան զատկական գառը, մկրտվեցին ամպի ու ծովի մեջ, անապատում կերան երկնքից իջած մանանան և ըմպեցին վիմաբուխ աղբյուրից (Ելք. ԺԲ, ԺԴ, ԺԶ, ԺԷ):

Ավագ հինգշաբթի օրը Տերը գալիս է Վերնատուն, որը Եկեղեցու օրինակն է, այնտեղ ուտում զատկական գառը, լվանում է Իր աշակերտների ոտքերը (սրա հիշատակն ենք նշում եկեղեցում այս օրը կատարվող Ոտնլվա արարողությամբ, որի վերջում հավատացյալներին օրհնված յուղ է բաժանվում հիվանդությունների պարագային գործածության համար), նրանց հաղորդ դարձնում Իր Մարմնին ու Արյանը՝ այսպիսով հաստատելով սուրբ Պատարագի խորհուրդը, իսկ գիշերը ելնում է Ձիթենյաց լեռ, Իր աստվածային գլուխը գետին խոնարհելով՝ աղոթում Հորը և ձերբակալվում (Մատթ. ԻԶ 17-46): Տերը նախ լվաց աշակերտների ոտքերը, ապա տվեց Իր Մարմինն ու Արյունը՝ կամենալով նախ սրբել նրանց աղամական մեղքից և հետո տալ սուրբ Խորհուրդը:

Ավագ հինգշաբթի օրը, երբ Տերը Վերնատանը նստեց Իր աշակերտների հետ, խորհրդանշում է Քրիստոսի՝ Իր փառքի աթոռին նստելն Իր տասներկու աշակերտների հետ:

Ավագ հինգշաբթի երեկոյան եկեղեցիներում կատարվում է Խավարման արարողությունը, որն արդեն վերաբերում է Ավագ ուրբաթի խորհրդին՝ Տիրոջ ձերբակալությանը, չարչարանքներին, խաչելությանն ու մահվանը, և Խավարում է կոչվում այն պատճառով, որ Հիսուսի խաչելության ժամանակ արևը կեսօրին խավարեց մինչև ժամը երեքը, երբ Հիսուսը հոգին ավանդեց (Մատթ. ԻԷ 45-50)»:

Ուրբաթ օրը, ըստ եկեղեցական տոնացույցի, Քրիստոսի խաչվելու օրն է, ուստի սգի օր էր: Ավագ ուրբաթ պատարագ չի մատուցվել, որովհետև այդ օրը Քրիստոսն ինքը պատարագվեց (զոհաբերվեց): Եկեղեցում ճաշու վեցերորդ ժամին հանդիսավոր թափորով կատարվել է Քրիստոսի խաչելության կարգը, իսկ երեկոյան՝ թաղման կարգը:
Ի նշան սգի՝ ուրբաթ օրը մարդիկ չեն լվացվել, ի հիշատակ Քրիստոսի չարչարանքի՝ ոչ միայն այս, այլև մնացյալ ուրբաթ օրերն էլ պաս են պահել:
Վաղ առավոտյան բոլոր հայ դարբինները, առանց խոսելու, գնում էին դարբնոց և երեք կամ յոթ անգամ մուրճով հարվածում զնդանին, որ Արտավազդի շղթաները հաստանան և նա չկարողանա դուրս գալ քարանձավից ու քանդի, տակնուվրա անի աշխարհը: Դարբիններն ու ոսկերիչները այդ օրը նաև մեծ քանակությամբ չարարգել նշաններ էին պատրաստում, որոնք հայտնի էին «ուրբաթաթուր» և «անժմի» անունով: Դրանք մեծ մասամբ երկաթե փոքրիկ օղեր, մատանիներ, ապարանջաններ էին, որոնք մայրերը գնում էին իրենց զավակներին չար աչքից զերծ պահելու համար և կարմիր-կանաչ թելերով կարում նրանց բաճկոններին, հագցնում մատին, կախում օրորոցներից: Միևնույն ժամանակ շորերի մեջքին, վերնաշապիկի վրա թելերով ճյուղանման նախշակարել են, իսկ կտորներով՝ խաչ կարել: Մարդիկ գույնզգույն թելեր կամ կտորներ են տարել եկեղեցի, օրհնել տվել: Եվ այս բոլորը նրա համար, որ ազատվեն չարից, փորձանքից, հեռու մնան չար աչքից, կայծակից:
Ուրբաթ գիշերը եկեղեցում էին անցկացնում, սգո, տառապանքի, լացի ու վշտի մթնոլորտում:
«Ավագ ուրբաթը խորհրդանշում է արարչության վեցերորդ օրը, երբ Աստված հողից արարեց Ադամին, Իր պատկերով ու նմանությամբ, իսկ հետո ստեղծեց Եվային և նրանց դրեց Դրախտում: Ուրբաթ օրը Ադամն ու Եվան կերան արգելված պտուղը, մերկացան փառքից, և Տերն անեծքով պատժելով մարդուն՝աքսորեց Դրախտից:
Վեցերորդ ժամանակաշրջանում Աստված սուրբ Կույսի անարատ արգանդում դարձավ կատարյալ Մարդ՝ հոգով, մտքով ու մարմնով, ոչպեսզի կատարի տնօրինական գործերը: Ավագ ուրբաթ օրը, ինչպես արդեն նշվեց, Տերը Հուդայի մատնությամբ ձերբակալվեց, ծեծի ու ծաղրի ենթարկվեց և ապա, Իր վրա վերցնելով Ադամի անեծքն ու դատապարտությունը, խաչի վրա մեռնելով, բացեց Իր կողը, և կողից բխած ջրով լվաց մարդու մեղքերը, իսկ բխած արյամբ մեզ գնեց չարի ծառայությունից (Մատթ. ԻԶ 47 - ԻԷ 56): Եվ ինչպես Ադամի կողից ստեղծվեց նրա կինը՝ Եվան, այդպես էլ Տիրոջ կողից ելավ Նրա հարսը՝ Եկեղեցին: Այսօր թեպետ

ուրախություն է հոգիների համար, քանի որ Քրիստոսի չարչարանքներով մեր հոգիներն ազատվեցին դժողքից, սակայն մարմնապես սուգ է ու տրտմություն»:

Ըստ եկեղեցու

Զատիկին նախորդող շաբաթը կոչվում է Ավագ (մեծ) շաբաթ, որտեղ ամփոփված է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի ամենակարևոր շրջանը՝ ուսուցումները, չարչարանքները, մահն ու հարությունը:
ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ՝ Նվիրված է երկնքի ու երկրի արարչագործությանը: Այս օրը մենք հիշում ենք անպտուղ թզենու առակը, երբ Հիսուս թզենու վրա բացի տերևներից ոչինչ չտեսնելով՝ անիծեց ասելով՝ «Այսուհետև քեզանից հավիտյան պտուղ թող չլինի»: Հիսուս այս առակով ցույց է տալիս բոլոր նրանց, ովքեր զարդարված են արտաքին բարեպաշտությամբ, սակայն չունեն այդ բարեպաշտության հոգևոր պտուղը՝ բարի գործերն ու ողորմածությունը և այլաբանորեն՝ պտղից, մարդկային բարի գործերից և առաքինություններից զուրկ մարդը կպատժվի թզենու օրինակով:
ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ՝ Նվիրված է տաս կույսերի առակին: Տաս կույսերն իրենց լապտերները առած, փեսային ու հարսին դիմավորելու դուրս եկան: Նրանցից հինգը հիմար էին, իսկ մյուս հինգը՝ իմաստուն: Հիմարները լապտերները վերցրին, բայց իրենց հետ բավարար ձեթ չվերցրին: Իսկ իմաստունները ունեին բավարար ձեթի պաշար: Փեսան ուշանում էր, ուստի կույսերը քուն մտան: Կեսգիշերին ձայն լսվեց. «Ահա փեսան եկավ»: Իմաստուն կույսերը պատրաստ էին պահել իրենց լապտերները և փեսայի հետ հարսանիքի սրահը մտան ու դուռը փակվեց: Եկեղեցու հայրերը այլաբանական, խորհրդաբանական իմաստներ են տվել այս առակին. փեսան Քրիստոսն է, և հարսանիքի սրահը՝ երկնքի արքայությունը, որին արժանանում են իմաստունները, ովքեր ժամանակին բավարար չափով ձեթով, այսինքն՝ ողորմության բարի գործերով են լցնում իրենց լապտերները: Ավագ երեքշաբթին մի ներքին ընդհանրությամբ կապված է նախորդ օրվա հետ. ակնարկում է, որ մեր առաքինի գործերի պտուղներով հոգեպես պետք է պատրաստ լինենք Քրիստոսի երկրորդ գալստյանը, այլապես կչորանանք թզենու պես և երկնքի արքայությունից դուրս կմնանք հիմար կույսերի նման: Ավագ երեքշաբթի երեկոյան ժամերգության ընթացքում ատյան են դուրս գալիս տասը մանուկներ՝ խորհրդանշելով տասը կույսերին և իրենց ձեռքին պահելով մոմեր՝ հինգը վառվող, իսկ հինգը՝ հանգած: Վառվող մոմերը խորհրդանշում են հավատքի լույսը, Աստծո պատվիրաններն աջքի առաջ ունենալը և գործելը՝ ըստ Ավետարանական պատգամի՝ «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար»:

ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝ Օծում և մատնություն: Այսօրը հիշատակում ենք այն մեղավոր կնոջը, ով թանկագին յուղով օծեց Քրիստոսի գլուխը, ինչը խորհրդանշեց Քրիստոսի մոտալուտ մահը: Առաքյալները մեղադրեցին այդ կնոջը՝ յուղը վատնելու համար: Իսկ Հիսուսը նրանց պատասխանեց. «Ինչո՞ւ եք նեղություն տալիս այդ կնոջը,

նա իմ հանդեպ մի բարի գործ կատարեց. աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք, իսկ ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: Իմ մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա իմ թաղվելը կանխանշեց»: Օծման այս դեպքին հաջորդեց Հուդայի՝ Հիսուսին մատնելու վճիռը, ով երեսուն արծաթով ու համբուրելով մատնեց իր ուսուցչին: «Այն ժամանակ տասներկուսից մեկը՝ Հուդա Իսկարիովտացին, գնաց քահանայապետի մոտ ու ասաց. Ի՞նչ կկամենայիք ինձ տալ, որ ես նրան ձեզ մատնեմ»: Եվ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան Հուդային:

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ՝ Առավոտյան մատուցվում է Սուրբ Պատարագ՝ ի հիշատակ վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոսի կողմից հաղորդության խորհրդի հաստատման: Պատարագը իմաստավորվում է մարդկանց փրկության համար, Քրիստոսի զոհաբերությամբ՝ խաչվելով, իր արյունը հեղելով և հաղորդության խորհրդի կատարումով, որը սուրբ սեղանի վրա օրհնված և պատարագված հացն ու գինին են: Որոնք Հիսուսի խորհրդանշական մարմինն ու արյունն են՝ հոգևոր սնունդը մարդկանց համար:
Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվում է ոտնլվայի արարողությունը: Վերջին ընթրիքից հետո Հիսուս ծնկի եկավ իր աշակերտների առջև ու ծառայաբար լվաց նրանց ոտքերը: Եկեղեցու հայրերը մի գեղեցիկ համեմատություն են կատարում. Ինչպես Ադամը պտուղը ճաշակելու համար նախ ոտքերով ընթացավ, քայլեց դեպի ծառը, Քրիստոսն էլ, մարդ արարածի քայլերը դեպի երկնքի արքայություն ուղղելուց առաջ, նախ աշակերտների ոտքերը լվաց:
Այս օրը բարձրաստիճան հոգևորականի կողմից, խորանում՝ յուղի օրհնության և տասներկու մանուկների ոտնլվայի արարողություն է կատարվում: Արարողություններից հետո այդ օրհնված յուղը բաժանվում է մարդկանց, որը օգտագործում են հիվանդությունների դեպքում կամ խառնում տանն ունեցած յուղին:
Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվում է նաև խավարման արարողությունը. խաչելությունից առաջ Հիսուսի գլխին փշե պսակ դրեցին, ծաղրեցին, անարգեցին ապա խաչեցին, ծարավը հագեցնելու համար ջրի փոխարեն լեղի տվեցին ու մեռնելուց հետո էլ տեգով խոցեցին: Արարողությունը սկսվում է այսպես. խորանի վրա վառվում են տասներկու մոմերը, մեկ հատ մեծ՝ նրանց միջև, որը խորհրդանշում է Քրիստոսին: Այդ ընթացքում ավետարաններից կարդացվում են յոթ հատվածներ, որոնք բովանդակում են Հիսուսի՝ Գեթսեմանիի պարտեզում աղոթելը, Հուդայի մատնելը, Հիսուսի՝ ամբոխի ձեռքը հանձնվելը, անարգվելը, Պետրոսի ուրանալն ու զղջալը: Ապա ամեն ավետարանի ընթերցումից հետո հանգցնում են խորանի տասներկու մոմերից երկուսը և վերջում մնում է մեկը, որն էլ խորհրդանշում է առաքյալների Քրիստոսին մենակ թողնելն ու լքելը:
ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ՝Այս օրը եկեղեցին հիշատակում է Քրստոսի չարչարանքները, խաչելություն ու թաղումը: Այս օրը առավոտյան կատարվում է նաև խաչելության կարգ, հավատացյալները եկեղեցում պատրաստում են Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ զարդարված ծաղիկներով, երեկոյան կատարվում է թաղման կարգ և

հանդիսավոր թափոր, որն էլ խորհրդանշում է Քրիստոսի թաղումը: Եվ ապա այդ գերեզմանի ծաղիկները բաժանվում են մարդկանց:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ՝ Շաբաթ երեկոյան կատարվում է Զատիկի՝ Սուրբ Հարության Ճրագալույցի պատարագ, երբ տրվում է Քրիստոսի Հարության ավետիսը, որով և ավարտվում է Մեծ պահքը: Ճրագալույցի պատարագով սկսվում է Հարության տոնը, իսկ կիրակի օրը Զատկական պատարագով այն վերածվում է համընդհանուր տոնախմբության: Հիսուսն իր մահով հաղթեց մահվանը, մեզ՝ մարդ արարածներիս փրկության համար: Երբ Զատկական պատարագին լսում ենք «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց» ավետիսը, մենք էլ մեր ձայնը բարձրացնենք, պատասխանելով՝ Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Ավագ շաբաթվա արարողակարգերի մասին կարող եք տեղեկանալ նաև http://www.qahana.am/?ln=am&page=spiritual_library_item&id=483 կայքից

«Զատկի շաբաթ, կարմիր հավկիթ, կարմիր արև, կանաչ են սար ու ձորեր»

Ավագ շաբաթ օրը առավոտյան Պատարագի ընթացքում՝ «Քրիստոս հարեավ ի մեռելոց» բառերը լսելուն պես երեխաները ճռռացրել են ճռիկները՝ չար ոգիներին փախցնելու նպատակով: Ոմանք էլ հենց տեղում՝ եկեղեցու մեջ, մաքրել են իրենց բերած ձվերն ու կերել, այսինքն՝ բերանն այստեղ են առաջին անգամ ձվով օծել: Պատարագից հետո Տերնդեզից ու Ծաղկազարդից պահպանած ճյուղերով վառել են թոնիրները և Զատկի սեղանի համար կերակուրներ պատրաստել, կարմիր ներկել Մեծ պասի ընթացքում հավաքած ձվերը, որից հետո տեղի է ունեցել Ս. Զատկի նախատոնակը: Մեծ պասն ավարտված է: Ընտանիքը հավաքվել է Զատկի սեղանի շուրջը, ուր ձու, ձկնեղեն, յուղեղեն կերակուրներ, աղ ու հաց և ծիսական այլ կերակուրներ ճաշակելով՝ լուծել են պասը:

Շաբաթ օրը ճրագալույց է՝ ճրագներ վառելու արարողություն: Եկեղեցում երեկոյան տրվող արարողությունը սովորականից շուտ է սկսվում, որպեսզի այն լույսով ավարտվի: Ս. Ծննդի ճրագալույցի արարողությանը նման կարգով կարդացվում են հատվածներ Ս. Գրքից, և ապա մատուցվում է Ս. Պատարագը: Արարողության ժամանակ բոլորի ձեռքերին վառվող մոմեր են լինում:

Զատկի շաբաթ օրը պոկել են երդիկից կախված Ակլատիզի վերջին՝ յոթերորդ փետուրը, պասը լուծելուց հետո մեծով-փոքրով ներկած ձվեր են կռվեցրել: Երեկոյան երիտասարդները, երեխաները շրջել են տնետուն, «Ավետիս» երգել, Քրիստոսի հրաշափառ հարությունը ավետել.

Ավետիք, ձեզ ավետիք,
Ձեզ ու մեզ մեծ ավետիք,
Քիրստոնեյք, արթուն կացեք,
Քրիստոս հարեյավ ի մեռելոց:

Այնթափցիները, որոնք փետրազարդ սոխը կոչում էին Խուլուճիկ, Մեծ պասի վերջին օրը այն թաթախում էին մածնի մեջ և նետում տանիքը: Ըստ նրանց

պատկերացումների, սոխը դառնում էր մկաններ, խռիվը՝ թևեր, ինքը՝ Խուլուճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում - գնում էր՝ հաջորդ տարին վերադառնալու պայմանով:

Շաբաթ գիշերը, տարվա բոլոր շաբաթ օրերի նման, տան ճրագը վառ են պահել, որ սովորաբար այդ օրն իրենց այցելող հարազատ ննջեցյալների հոգիները մթության մեջ չլինեն: Այդ օրը նույնիսկ լվացք չեն արել, որ ննջեցյալների խմելու ջուրն անգամ չպակասի: Ճռռացրել են ճռիկները՝ չար ոգիներին փախցնելու նպատակով:

«Այս օրը պատկերն ու օրինակն է արարչության յոթերորդ օրվա, երբ Աստված հանգստացավ Իր բոլոր գործերից: Աստված վեց օրում արարեց ժամանակավոր ու ապականության ենթակա աշխարհը, իսկ յոթերորդ օրը՝ սրբերի հանգիստը: Անցած օրերն Աստված պատվեց արարչությամբ, իսկ այս օրը՝ օրհնությամբ ու սրբությամբ:

Վեցերորդ ժամանակաշրջանում Փրկիչը եկավ կամավորապես չարչարվելու: Այս մեծախորհուրդ շաբաթ օրը հիշատակվում են Տիրոջ թաղումը և հանգիստը գերեզմանում (Մատթ. ԻԷ 57-61): Այս օրը Հիսուսը մարդկանց հոգիների չարչարանքների տունը՝ դժոխքը ավերեց և բացեց հանգստյան տունը՝ Դրախտը:

Իսկ յոթերորդ ժամանակաշրջանի հասնելուն պես Տերը կրկին պիտի գա և արդարներին շնորհի աշխարհի սկզբից նրանց համար պատրաստված արքայությունը՝ հավիտենական հանգիստը:

Թեև Տիրոջ թաղման հիշատակի օրը Ավագ շաբաթն է, սակայն թաղման գլխավոր արարողակարգը կատարվում է Ավագ ուրբաթ երեկոյան:

Իսկ Ավագ շաբաթ օրվա երեկոյան կատարվում է սուրբ Զատկի ճրագալույցի արարողությունը՝ այսպիսով եզրափակելով «Տիրոջ չարչարանքների շաբաթը և ավետելով Նրա հարությունը մեռելներից»:

ԶԱՏԻԿ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ:

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարից և լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը:

Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Որոշ ուսումնասիրողներ այն նմանեցնում են հրեաների Պասեքի հետ (Պասեքը, որ նշանակում է ելք, հրեաների ամենասիրված տոնն է և խորհրդանշում է Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր նրանց ելքը): Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը

համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը, ծիծեռնակն ու սարյակը:

Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ է պատճառը, որ գրպաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և, ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն:

Զատկական ձուն «օրինակն է բոլոր աշխարհի, և ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է, այսինքն՝ մեջը» (Թորգոմ վարդապետ): Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին. «Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և, ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի Արյամբ: Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»: Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի, կյանքի խորհրդանիշ: Ստ. Մալխասյանցը նշում է, որ «ծառ» նշանակում է նաև «ձվի սուր ծայրերը»: Այս բացատրությունը, որ ցույց է տալիս ձվի և կենաց ծառի գաղափարական առնչությունները, վկայում է, որ զատկական ձուն իր մեջ պարունակում է կյանքի հավերժության խորհուրդը:

Զատիկի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագից, որի ավարտից հետո տնետուն անցնելով՝ մարդիկ իրար հայտնում են Ս. Հարության ուրախաբեր ավետիսը՝ ասելով. «Քրիստոս հարյավ ի մեռելոց: Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»: Ժամերգությունից հետո, շատերը, նախապես պայմանավորված լինելով, «ողջումաղբեր» կամ «ողջումաքույր» էին դառնում, այսինքն, քահանայի օրհնությունն ստանալով, եղբայրանում ու քույրանում էին միմյանց հետ: Զատկական քույր - եղբայրությունը սրբորեն պահվում էր և խորապես հարգվում հասարակության կողմից: Նրանց միջև ամուսնությունն այնուհետև արգելվում էր: Այդ օրն ընդունված է եղել գյուղովի ախար՝ մատաղ անելը և առանց խտրականության բոլորին բաժանելը: Այս ավանդույթը նկատի առնելով՝ Զատկի կիրակին էլ ախարի է կոչվել: Լոռվա Օձուն գյուղում, մինչև ախառը բաժանելը, բազմության առաջ մի քանի մարդ երգելով ավետում էին Քրիստոսի հարությունը՝ ավարտելով հետևյալ բարեմաղթություններով.

Օրհնվի և պահպանվի

Ձեր դաշտն ու սարը, այծն ու ոչխարը,
Կովն ու կթանը, չութն ու գութանը,
Վարն ու վաստակը, գլուխն ու տակը,
Հանդն ու հանդստանը, արոտն ու այգեստանը,
Կալն ու ջաղացը, ցորենն ու հացը,
Ձին ու էշը, եզն ու գոմեշը,
Գառնարածը ու ոչխարարածը,
Տավարածն ու հորթարածը:

Քահանաները տիրացուների հետ Զատկի օրը տնետուն են այցելել և տնօրհնեք արել: Տներում խոնչի վրա դրվել են թթխմոր, աղ, խունկ, հացահատիկ, ջուր և այլն, իսկ խոնչի տակը՝ քակոր, հավկիթ և այլն, որպեսզի սրանք ևս օրհնվեն ու շատանան: Մարդիկ այցելել են մտերիմների, հարազատների տները, հաշտվել են խռովածները, նույնիսկ թշնամիները:

Զատկի օրն ընթացել է բարեկամների, հարազատների կերուխումներով, մասսայական ձվակռիվներով, ամուրի տղաների ջիլիթախաղով, դափ ու զուռնի նվագակցությամբ, հասարակական պարերով: Վերջացել է Մեծ Պասը և սկսվել Ուտիսի շրջանը: Բասենում կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի Զատկի տոներն էին, մարդիկ աշխատանքի չէին գնում: Այդ երեք օրն էլ կեր ու խումի, խաղ ու խնդումի օրեր էին: Առավոտից մինչև ուշ երեկո գյուղում մի քանի տեղ, հատկապես կալերում ու մարագներում ձու էին խաղում: Մեջտեղ էին գալիս նաև հում, սպիտակ ձվեր: Այնպիսինները կային, որոնք խաղի ընթացքում տանում էին երեք, չորս դույլ ձու:

Երկուշաբթին, որն հաջորդում էր Զատիկին, մեռելոց օր էր՝ բոլոր ննջեցյալների հիշատակության օրը: Մարդիկ, խմիչք և ուտելիք առած, գնացել են գերեզմանները, մոմ վառել, խունկ ծխել, ողորմաթաս խմել, գերեզմաններն օրհնել տվել, աղքատներին բերած ուտելիքից բաժին հանել: Անցյալում «մեռելոցը», մասնավորապես Զատկի ու Սուրբ Խաչի, ոչ թե ողբի, այլ ուրախության օր էր: Շատ վայրերում այդ օրերին հենց գերեզմանատներում հացկերույթի սեղաններ էին բացվում, որոնք վեր էին ածվում տոնական խնջույքների: Խաղերը և նույնիսկ պարերը ոչ միայն արգելված չէին, այլև «մեռելոց»-ի անհրաժեշտ ծիսակարգի մեջ էին մտնում, մի տեսակ, կարծեք, իրենց ուրախությանը հաղորդակից դարձնելով սիրելի հանգուցյալներին: Այդ օրը մի հետաքրքիր սովորություն կար. քարափում, մողեսների բների առաջ շաքարի կտորներ էին դնում՝ որևէ բան խնդրելով: Եթե մողեսը շաքարի կտորը դեպի բունն էր քաշում, խնդրանքը կկատարվեր, եթե ոչ՝ չէր կատարվի:

Կանաչ – կարմիր կիրակին կամ Կրկնազատիկը բուն Զատիկին հաջորդող կիրակին է: Դրան հաջորդում են Կանաչ, ապա Կարմիր կիրակիները, որոնք կապվում են բնության զարթոնքի, բուսականության, կյանքի պտղաբերման հետ: Այդ օրերին մարդիկ ընտանիքներով, խմբերով այցելել են մոտակա ուխտավայրերը, մատաղ են

արել, պարեր, ձիարշավ, մրցություններ, հրաձգություն կազմակերպել, լարախաղացների խաղին հետևել: Ղզլարի հայերը Կանաչ կիրակի ձվերը ներկում էին կանաչ գույնով:

Զուն բուսանախշվել է հետևյալ եղանակով.

Սոխի կեղևով ներկված ձվին սոսնձել են տարբեր տեսակի կանաչիների տերևներ: Այնուհետև մի քանի ժամ ձուն թթու թանի մեջ են պահել և հանելուց հետո սոսնձած տերևներից զգուշությամբ ազատել: Սոսնձած մասերում կարմիր գույնի նախշազարդ դաջվածք է մնացել, իսկ շուրջը թթու թանից սպիտակած է եղել: Ստացվել է տերևազարդ ձու:

Մինչ սոխի կեղևներով ձվերի ներկելը, դրանց վրա դրվել են բույսերի տերևիկներ և ցանցավոր կտորով պինդ կապել այնպես, որ հեղուկը ձվի կեղևի և տերևի արանքը չթափանցի: Խաշելուց հետո ձուն կարմրել է, իսկ տերևների տեղը սպիտակ է մնացել:

Զատկական ձվերը փնջում էին գույնզգույն թելերով, մանր ուլունքներով, ներկում էին և նախշազարդում: Սովորաբար փնջած ձվերի բութ ծայրում գույնզգույն թելերի փնջիկ է թողնվում, իսկ սուր ծայրում՝ նույն թելերից հյուսված պարան, որով էլ այն կախում են տան առաստաղից, ամրացնում պատի աչքի ընկնող տեղում կամ էլ հայելու առջև:

Զատկի երգեր

Յալալի

Յալալի, Տերն հարություն է առել,
Յալալի, հավը կարմիր է ածել,
Յալալի, Պողոսն երազ է տեսել,
Յալալի, Պողոս, երազդ ի բարին,
Յալալի, շնորհավոր նոր տարի,
Յալալի, նոր տարի ու նոր բարի:
Յալալի, ախպերս ո՞ւր է, ո՞ւր է,
Յալալի, պառկել բախչան ի քուն է,
Յալալի, նըխշուն բարձը գլխուն է,
Յալալի, ջուր վերևոքն անցել է,
Յալալի, նըխշուն բարձը թրջել է,
Յալալի, ախպորս քնից հանել է:
Յալալի, ախպեր, ելի էդ քնից,
Յալալի, գինի խմի էս գավից,
Յալալի, գինին անապակ խմի:

Ճոր պար

Օր պար, ճոր պար,
Ոսկե գնդին բարեբար,
Մեծ պապ, արի գողտուկ տար,
Շատ պզտիկ է, չէ, չենք տա:

Ճոր անենք, ճոր պար անենեք,
Ոսկե թախտին պար անենք,
Զատկին մենք նոր շոր կարենք,
Սա էլ մաշվի՝ նորն անենք:

Զնկլիկ

Զնկլիկ, օրոճ եմ շարե,
Զնկլիկ, գոտիս եմ կարե,
Զնկլիկ, պատը ծակեցին,
Զնկլիկ, հարսին հանեցին:
Տարան, թող տանին,
Զատկին կբերեն;

Հարսին հանին քողերով,
Զնկլիկ, կարմիր սոլիրով,
Զնկլիկ, նախշուն թաթերով,
Զնկլիկ, դեղին մոմերով:
Տարան, թող տանին,
Զատկին կբերեն;

Զատկի ասույթներ, առածներ, ոտանավորներ

Զատիկն ասել ա՝ հենց գամ, արմանաս, հենց գնամ, զարմանաս:

Կարմիր ձուն Զատկին կսազե:

Զատկե Զատիկ է, նավակատիկ է, չամչե հատիկ է:

Հավը կուտե հատիկ, հատիկ, ծով ձմեռեն կելնե Զատիկ:

Զատիկ ավելի շուտ եկավ, քան նավակատիկը:

Զատիկը թռի, մեր կովը ծնի:

Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:

Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:

Զատիկը առանց ձվի չի լինի:

Զատկից հետո կարմիր հավկիթ:

- ✓ Զատիկ, Զատիկ, նավակատիկ,

Արի, նստի մեր տան մոտիկ,
Իմ հեր քե կանի ուր լաճիկ,
Իմ մեր քե կանի ուր հարսիկ,
Ես քե կուտամ իմ խաս գուլպեն,
Արի, խեր բեր մեր տան վրեն:

- ✓ Հողմը փչեց ի հարավեն,

Ազատվեցին դաշտք ձյուներեն,
Բերկրություն է ամեն տղոց,
՝Քրիստոս հարյավ ի մեռելոց՝:

Լուսնակն անուշ

Գիշեր կծիկ գլորե,
Լուսնակ լրիվ բոլորե,
Մեջ սև ամպի մոլորե:
Լուսնակն անուշ, հովն անուշ,
Ռանչպարի քունն անուշ:

Քամին սարին զղզղաց,
Բարակ անձրև շղշղաց,
Դալար տերև դողդողաց:
Լուսնակն անուշ, հովն անուշ,
Անձրևի հոտն է անուշ:

Երկար գոմը սալեցին,
Սև ձին մեջը նալեցին,
Սպիտակ ճակատ նշնեցին:
Լուսնակն անուշ, հովն անուշ,

Աղոթրանի լույսն անուշ:

Դռան առաջ հերկեցին,
Զատկի ձվեր ներկեցին,
Դրկցին ողջույն տվեցին:
Լուսնակն անուշ, հովն անուշ,
Հում կաթի պաղ սերն անուշ:

Բյուրապատիկ

Բյուրապատիկ, բյուրն պատիկ,
Ոսկե հատիկ ցորեն բշիկ,
Տա Աստված հազար Զատիկ,
Դուք լավ լինեք, շեն լինեք:
Տա ձեր սրտին Աստված անձրև,
Ձեր ամենին՝ երկար արև,
Տեր, թոն արա, թոն, թոն արա,
Գարի հացը բոլ-բոլ արա:
Բյուրապատիկն եմ, փայ կուզեմ,
Կարմիր կովի եղը կուզեմ,
Խև հավի հավկիթը կուզեմ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ՎԻՃԱԿ, ԿԱԹՆԱՊՐԻ ՏՈՆ

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր երևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներորդ օրը նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին, ապա ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց նրանց և լեռան գագաթից սկսեց համբառնալ երկինք: Շուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից:
Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օր անց և, պայմանավորված լինելով Զատիկով, բնականաբար, այն շարժական է և ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ տոնվում է հինգշաբթի:
Առնելով մարդկային մեր բնությունը՝ Քրիստոսն իր գալուստով մաքրեց ու օրհնեց անեծքով դատապարտված արարածներին: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին: Օրվա շարականը հիշատակում է Համբարձման դեպքը և ակնարկում նաև Ս. Հոգու գալստյան մասին. «Նստեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ վերևից զորություն ստանաք»:
Եթե Զատկի տոնին առանձնանանում , զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքները, ապա Համբարձմանն ակնկալվում է ցանված բերքի աճն ու

փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիս դաշտերը և երգ-պարով, ուրախություններով սիրաշահում Մայր բնությանը: Համբարձումը բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի տոն է: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ, այսինքն՝ այն պահի, երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացքը վեր է պարզում և Աստծուց ու բնությունից ակնկալում հատուցում:
Տոնի մյուս կարևոր խորհուրդը. այդ օրն արգելվում է արյուն հեղել՝ կենդանու զոհ մատուցել, որը դարձյալ բնությանը սիրաշահելու, կենդանիների բազմացման միտում ունի:
Համբարձումը հեթանոսական բնապաշտության և քրիստոնեական գաղափարախոսության ժողովրդական ընկալման լավագույն զուգորդումն է: Դրա փայլուն վկայությունն է Փրկչի համբառնալու գաղափարի ընդունումը՝ իբրև սիրահար զույգի՝ ճիշտ նույն ժամին երկինք բարձրանալու և աստղ դառնալու հավատքի նորովի իմաստավորումը:
Համբարձման գիշերվա վերաբերյալ ամենուր տարածված էր Լեյլի ու Մեջլունի հանդիպման առասպելը: Ծնողների պատճառով իրենց մուրազին չհասած սիրահար զույգը՝ Լեյլին ու Մեջլունը խնդրում են Աստծուն իրենց աստղ դարձնել և իր մոտ՝ վերև տանել: Աստված կատարում է նրանց խնդրանքը, և տարին մեկ անգամ, Համբարձման գիշերը, այդ աստղերը երկնակամարի տարբեր կողմերից գալիս միանում, ջերմ համբույրով գրկախառնվում են և դարձյալ վերադառնում իրենց տեղերը: Այդ պահին համբուրվում, միմյանց ողջունում են երկինքն ու երկիրը, ծառերն ու ծաղիկները...
Տոնին նախորդող չորեքշաբթի օրը կանայք «Ծազկամոր կիրակի» էին պահում՝ խուսափում էին որոշ աշխատանքներից ի պատիվ «Ծաղկամոր», որպեսզի նա իրենց երեխաներին զերծ պահեր«ծաղիկ» և «կարմրուկ» հիվանդություններից: Վանեցիների մոտ այն կոչվում էր «Ծաղկամուտ»: Այդ նույն օրը, վաղ առավոտյան սկսվում է հիմնական ծեսի՝ վիճակի նախապատրաստությունը, որի պատճառով էլ հաճախ տոնը կոչվում էր «Վիճակ»: Աղջիկների նախապես ընտրված խմբերը՝ յոթական հոգի, դուրս էին գալիս ծաղիկ հավաքելու: Ծաղիկներից բացի նրանք փարչի մեջ հավաքում էին յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ տեսակ ծառից յոթ տերև, յոթ տեսակ ծաղիկ, հոսող առվից յոթ տեսակ քար: Փարչի մեջ գցվող ծաղիկներից բացի բազմաթիվ ծաղիկներ էին քաղում՝ զարդարվելու և Համբարձման ծաղկեփնջեր պատրաստելու համար: Ծաղիկների մեջ գերիշխում էին դեղին գինարբուկը (հորոտ-մորոտ), ճերմակ ու վարդագույն սիրի-սիրին, կարմիր ու ոսկեգույն կուժկոտրուկները, բոսորագույն աղբրաց արունը, ալ վարդակակաչը: Ընդհանրապես, աղջիկները դուրս էին գալիս բոլորից գաղտնի և, մինչև իրենց առաքելությունը չկատարեին, անխոս ու լուռ էին մնում: Բայց կային այս կանոնից շեղումներ: Օրինակ, Շիրակում ծաղկահավաքը կատարվում էր օրը ցերեկով, ողջ համայնքի, գյուղի ուղեկցությամբ, զուռնա - դհոլի նվագի տակ: Բասենում աղջիկները ծաղկահավաքի ժամանակ Համբարձման երգեր էին երգում, նրանց ուղեկցում էին տղաները, ձայնակցում երգերին: Նրանք իրենց հետ

վերցնում էին գամփռ շներ, որոնք խաղալով, արտերի մեջ թավալ տալով, վազում էին տերերի առջևից, թռչկոտում, ուրախանում և փաթաթվում տերերի ոտքերին: Քեսափում նույնպես այս ծաղկահավաքը նկատելիորեն ձևափոխվել էր. այստեղ չորեքշաբթի երեկոյան մանկահասակ աղջիկ – տղաների խումբը մի սափոր առած շրջում էր տնետուն՝ «մէնթիվոր» հավաքելու: Նրանք յոթը տուն էին մտնում, յուրաքանչյուր տնից յոթ ափ ջուր, յոթ տերև և յոթ փոքրիկ քարեր հավաքելով՝ դնում լաթով ծածկված սափորի մեջ: Սափորը երբեք գետնին չէին դնում, եթե անհրաժեշտություն էր առաջանում՝ դնում էին եռոտանու վրա կամ կախում գամից: Վանում յուրաքանչյուր խումբն իբրև մի ամբողջություն, անհրաժեշտ էր համարում ունենալ գլխավոր, որ լինում էր ամենից մեծը կամ գեղեցիկը: Ապա որոշում էին պաշտոնները՝ ծաղիկ հավաքողը, ջուր վերցնողը, առաջնորդը և, վերջապես, դրոշակակիրը: Խմբից առաջ գնում էր դրոշակակիրը՝ փայտի ծայրին մի փունջ ծաղիկ և մի գունավոր թաշկինակ կապած: Իրիկնապահին շրջում էին տնետուն, երգում վիճակի երգերից մի տուն, տալիս մի փունջ ծաղիկ, ապա առաջարկում փարչի մեջ տան անդամներից յուրաքանչյուրի անունից մեկական նշան զցել՝ ուլունք, մատանի, կոճակ, բանալի և այլն: Այդ փարչի մեջ հետո էին ջուր լցնելու: Ապա վերցնում էին երկճղանի փայտ, վերին մասում կապում էին մի թզաչափ փայտ, որը դառնում էր խաչաձև, երկու ոտքերով: Հագցնում էին մեկ տարեկան երեխայի հագուստներ: Փայտի վերին մասին գլխի ձև էին տալիս՝ շորեր կապելով: Գլխի առաջին մասին մոտավորապես դեմքի ձև էին տալիս, կապում սպիտակ թաշկինակով և նկարում աչք, քիթ, բերան և այլն: Զարդարում էին, ով ինչով կարող էր, հնարավորինս ճոխ: Բացի գլխի կապից՝ ամեն բանով դարձնում էին երեխայի շատ նման մի խրծիկ, որը շատ անգամ իր ոսկի զարդերով բավական մեծ արժեք էր ունենում (ունենում էր ճակատնոց՝ ոսկու շար, մանյակ կամ ճտնոց, արծաթե խաչ, կուրծքը զարդարված էր զանազան զարդերով): Պատրաստված տիկնիկը ամրացնում էին Փարչի բերանին. երկուսը միասին կոչվում էր Վիճակ: Այն դնում էին ապահով տեղ: Արևը մայր մտնելուց մի քիչ հետո 7 հոգով լուռ, անխոս յոթ աղբյուրից յուրաքանչյուրից հավաքում էին յոթ ափ ջուր, յոթ տեսակ ծառից և յոթ տեսակ ծաղիկներից մեկական տերև և թերթիկներ, յոթ հատ քար ու մի բուռ ավազ:
Սկսվում էր ծաղիկը երգերով գովելով փնջելու և վիճակի պուլիկը պատրաստելու հաճելի ծեսը: Ծաղիկը գովելով երգելու ընթացքում աղջիկները գովում էին «Վիճակն» առհասարակ: Աղջիկներից մեկը երգում էր, մյուսները շարունակ կրկնում էին.

Ջան, վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Պատրաստում էին մեծ քանակությամբ ծաղկեփնջեր: Արծկեում և Գործոթում (Բորկրի) այդ ծաղկեփնջերը կոչվում էին խաչփնջեր, ձիավորափնջեր, սիրափնջեր: Մութն ընկնելուց հետո վիճակի փարչը թաքցնում էին խոտերի մեջ և շուրջ բոլորը զարդարում ծաղկեփնջերով: Գիշերը փարչն անպայման պիտի մնար դրսում, բաց

երկնքի տակ՝ «աստղունք», Համբարձման հրաշալի, կախարդական գիշերվա զորավոր հմայքին ենթարկվելու և առավոտյան ցողով օծվելու համար: Այդ վիճակափարչն այնպիսի տեղ էին պահում, որ հանկարծ եզնարած և հոտաղ տղաները չգտնեին: Գտնելու դեպքում նախ վիճակի ավանդական կարգը խախտվում էր, և, երկրորդ, մինչև աղջիկները տղաներին նվեր չտային, ետ չէին ստանում: Այդ էր պատճառը, որ վերջում աղջիկներն աներևույթ տղաներին էին ուղղում երգի հետևյալ տողերը.

Իմ ծաղիկը քաղած ա,
Բարձր տեղում պահած ա,

Ով իմ ծաղիկին ձեռք տա,
Արյունաթաթախ գետին գա:
Ջան, վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Համբարձման չորեքշաբթի, լույս հինգշաբթի գիշերը համարվում էր խորհրդավոր ու զարմանալի գուշակությունների, հրաշալիքների ու կախարդանքների գիշեր: Աղջիկները մեկական ձու էին դնում տանիքին, որպեսզի հրեշտակները ձվի վրա իրենց բախտը գրեին: Առավոտյան ստուգելիս՝ ձվի վրա կարմիր նշաններ գտնողներին երջանկություն, սև նշաններ գտնողներին դժբախտություն էր սպասվում: Կանայք քակորի մի շերտի մեջ կողպած կողպեք դնելով՝ գցում էին դուրս: Բախտավորության ավետաբեր էր առավոտյան բացված կողպեքը: Այդ կախարդական գիշերը չարքերն էլ հանգիստ չէին մնում: Նրանք կարող էին հարս ու աղջիկ փախցնել, կովերի կաթը ցամաքեցնել: Մուշում ու Բուլանխում դա «լեբչին» կամ «լեբրար»-ն էր, որը բացօդյա տեղում ոչինչ անել չէր կարող: Դրա համար էլ մարդիկ իրենց կենդանիներով ու ընտանիքներով բացօդյա էին անցկացնում: Համբարձման գիշերը չարքերի փախցրած հարս-աղջիկը միայն մեկ տարի հետո կարող էր վերադառնալ, ուստի հարկավոր էր շատ զգույշ լինել թափառումների այդ գիշեր:

Սարի գլխին ամպը ցոլաց,
Համբարձման անուշ գիշեր է,
Վարդի թփին ցողը մնաց,
Իմ յարի նխշուն թշերը:

կրկնակ - Համբարձման անուշ գիշեր է,
Իմ յարի նըխշուն թշերը,
Իմ յարի նըխշուն թշերը,
Համբարձման անուշ գիշեր է:

Երգդ երգե հոտաղ տղա,

Պար եմ բռնե, հետս խաղա;

Մեր սարերի սիրուն ծաղիկ,
Սիրտս մտար հատիկ – հատիկ:

Վանքի ձորը ծաղիկ շատ կա,
Հորոտ, մորոտ, նարգիզ, լալա:

Հինգշաբթի վաղ առավոտյան բոլոր տներում կաթնապուր էին եփում: Կաթնապրի տակ վառվող կրակի մեջ էին գցում Մեծ պասին թխած յոթ քակորները: Ջանում էին յոթ բակերից լուռ ու թաքուն չոփեր հավաքել և նույնպես գցել կաթնապուրի կրակը: Կաթնովը բաժանում էին հարևաններին, բարեկամներին, անցորդներին, շաղ էին տալիս արտերում ու այգիներում, որ հունձը բարեհաջող լինի, բերքը՝ առատ: Բոլոր տներում այդ օրվա կաթնապուրը մատաղ էր, այն բաժանվում էր առնվազն յոթ տեղ: Հավանաբար այդ էր պատճառը, որ Համբարձումը երբեմն անվանել են նաև Կաթնապրի տոն: Որոշ տեղերում կաթնապուրը եփում էին խմբովի, արտերի մոտ, և մի քանի շերեփ շաղ տալիս արտերի շուրջը՝ նախ հնձի առատությունն ապահովելու նպատակով, ապա՝ արտը մորեխից ու կարկուտից ապահովելու համար: Մարդիկ հավատում էին, որ այն մարդը, ով առաջինը կճաշակեր Համբարձման կաթնապուրից, նրան էլ բաժին կընկներ այդ տարվա առատությունն ու ապահովությունը:
Վաղ առավոտյան կանայք սիրի-սիրի ծաղիկ կամ ավելուկի թուփ էին պոկում և դնում կաթնամանի վրա, որպեսզի ապահովեն կաթի առատությունը: Եթե հաջողվում էր գտնել սովորաբար եռատերև սիրի-սրիու երկտերևանոցը, շատ ուրախանում էին և գցում խնոցու մեջ: Մի քար էին դնում ծառի ճյուղերի արանքում, ասելով. «Քո պտուղը քարի պես ամուր մնա, չթափվի», արմատի մոտ մոխիր էին ցանում՝ ասելով. «ճիճու չընկնի քո մեջ»: Գիշերվա ընթացքում առատորեն բուժիչ ցող է իջնում կանաչների վրա: Մարդիկ այդ ցողը բուժիչ էին համարում՝ թավալվելով ցողով օծված կանաչների մեջ: հավաքում էին այդ ցողը, խառնում ջրին (ոմանք նաև յոթ ծաղիկ էին գցում) և օգտագործում գլուխը լվանալիս, լողանալիս, լվացք անելիս և այլն:
Համբարձման առավոտյան Պատարագից առաջ ծաղիկներով զարդարված փարչերը դնում էին բեմի առջև՝ օրհնելու համար: Որից հետո պատրաստվում էին հավկուրը շուռ տալու ծեսին: Աղջիկներից մեկը՝ «գլխավոր» երգողը, փարչի պարունակությունը շուռ էր տալիս մի ամանի մեջ՝ ասելով.

Սկլա, սկլա, պատին տուր,
Հավկուրը շուռ տուր,
Վախում եմ քնեմ, քունս տանի,
Չարսավս տանիլ տամ:

Ապա կրկին ամանից շուռ էր տալիս փարչի մեջ՝ կրկնելով նույնը և այս անգամ չարսավի փոխարեն ասելով հագուստի այլ տարր (շալ, շապիկ, գուլպա, մաշիկ և այլն): Այսպես, հերթով շուռ տալով, թվարկվում էին հագուստի բոլոր տարրերը մինչև վերջ: Իսկ Բասենում մեկ անգամ էին շուռ տալիս մի սկուտեղի վրա և ասում.

Էսոնք քուլլի պատին տանք,
Մեր հավկուրը հոս շուռ տանք,
Վախենանք քնենք ու մնանք,
Մեր վիճակը տանել տանք:

Փարչի պարունակությունը լցնում էին մի բարակավիզ սափորի մեջ, սափորի կոկորդով գրտնակ անցկացնում, եզրերը փալասներով ամրացնում, գրտնակի վերին, ցցված մասում փալասներից գլուխ, ձեռքեր ու հագուստ հագցնելով՝ տիկնիկ պատրաստում, որը զարդարում էին իրենց սեփական զարդերով, ուլունքներով: Այդ տիկնիկը հայտնի էր «Վիճակի տիկնիկ», «Արուս«, «Վիճակի Արուս» անուններով (Արուս արաբերեն նշանակում է՝ հարս): Անչափահաս մի աղջնակի հագցնում էին հարսի հագուստ և զուգում: Ապա խմբով դուրս էին գալիս երգ ու պարով, սափորը պարեցնելով, «Վիճակը» գովելով: Աղջիկների խումբը մտնում էր բակերը, երգելով բարեմաղթություններ հղում տանտերերին, նրանց ծաղկեփունջ ու փարչի «աստղունք» դրած ջուր նվիրում՝ փոխարենը ձու, կարագ, կաթ, պանիր, ստանում:

- ✓ Էսօր մեծ Համբարձում է,

Հանաներ, նաներ, նաներ,
Ծաղիկների հարցում է,
Ջանաներ, նաներ, նաներ,
Աստված երկինք համբարձվավ,
Հանաներ, նաներ, նաներ,
Ամենքի բախտ բարձավ,
Ջանաներ, նաներ, նաներ,

- ✓ Վիճակ, արի քյե տանեմ,

Տանսե տանիս քյե խանեմ,
Լեն անթարով քյե պախեմ,
Ջան, վիճակ, ջան, ջան...

- ✓ Տիսեյք վիճակ ինչ կանի,

Սրտի ուզածն ի՞նչ ի,
Խորերով ցորեն կուզի,
Արտերով գարի կուզի,
Ջան, վիճակ, ջան, ջան...

- ✓ Տանուտեր, գնա բազար,

Օխչրներ էնե հազար,
Տանտիկին, մըր փայը տուր,
Տանը չըդիպնի նազար:

- ✓ Դուռը բացեք, մարդ եկավ,

Սինին լիքը վարդ եկավ,
Գովեմ, գովեմ, ում գովեմ,
Մեր Արսենին գովեմ (տալիս են տան երեխայի անունը):

- ✓ Սև հավեն հավկիթ կուզեմ,

Ջան, վիճակ, ջան, ջան,
Կարմիր կովեն եղ կուզեմ,
Ջան, վիճակ, ջան, ջան:

Աղջիկների նվիրած ջուրը լցնում էին խնոցին, որ յուղն անպակաս լինի, ծաղկեփունջը դնում էին ամբարի վրա, որ հացն անպակաս լինի, կամ կերցնում էին կաթնատու կովերին ու լծկան եզներին, իսկ իրենք ընտանիքի անդամների թվով մեկական փոքրիկ իր էին գցում վիճակի փարչը՝ իրենց բախտը գուշակելու նշան:

Բասենի գյուղերում հատկապես նախրապան տղաները ծաղիկներով զարդարում էին եզին (Հայաստանի որոշ բնակավայրերում զարդարում էին ամենակաթնատու կովին, ոչխարին, գառանը) և հանդիսավոր պտտում գյուղի փողոցներով: Ամբողջ գյուղը թնդում էր. «Համբարձման եզն էկավ»: Զարդարված կենդանուն պտտողներին տալիս էին մթերք, որի դիմաց ստանում էին բարեմաղթանք՝ «շեն մնա, շեն մնա»:

Այս ամենից հետո բոլորը շտապում էին դաշտեր, այգիներ, ուր տեղի պիտի ունենար Համբարձման կարևորագույն ծեսը՝ վիճակահանությունը: «Փնջած» եզն ազատվում էր իր զարդարանքից՝ ծաղիկներից: Ծաղիկները թողնում էին դաշտում, եզը քշում «յայլան», իսկ իրենք՝ նախրապանները, հովիվները բոլորում խնջույքի սեղանի շուրջը: Այդ նույն ժամանակ աղջիկների խմբերը, ընտրելով հարմար տեղ, նստում էին խոտերի վրա, կենտրոնում դնում էին վիճակի փարչը, որի մոտ նստում էր երեսը քողով ծածկած փոքրիկ հարսնացուն: Որպես անարատ միամիտ երեխա՝ նա պիտի յուրաքանչյուր բախտագուշակ-երգից հետո հաներ նշանները փարչի միջից, և ըստ այդ քառյակի բովանդակության վճռվեր նշանի տիրոջ բախտը: «Վիճկի Արուսը» զատում էին փարչից, համբուրում, բազմեցնում մի պատվավոր տեղ: Սկսում էր լավագույն երգողը, մյուսները հանգերգում էին: Նախ դիմում էին վիճակի փարչին.

- ✓ Վիճակ, վիճակ, ծաղկավիճակ,

Շալե շապիկ, նախշուն կոճակ

Եզան տարան տիրոջ դուռը,
Ճատկին զարկին կարմիր նուռը,
Ջան, ծաղիկ, Համբարձում...

- ✓ Վիճակ, վիճակ,

Վիճակի չիչակ,
Վարդ, մանուշակ,
Օսկի կոճակ:

- ✓ Տեսեք վիճակն ի՞նչ կուզի,

Սրտի ուզածն ի՞նչ ի,
Սարերով ցորեն կուզի,
Արտերով գարի կուզի:

- ✓ Մերն ի կերե խավրծիլ,

Տղեն բերե ոսկեծիլ,
Հարս, հան վիճակն ի բարին,
Համբարձում դիլաքդ կատարի,
Հասնես քո սրտի մուրազին:
Ջան, վիճակ, ջան, ջան:
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

- ✓ Տիքրիս հասավ կյետ Մուրադին,

Տյու էլ հասար քյու մուրազին,
Խարս, խան վիճակն ի պյարի,
Համբարձում քյու դիլաք կատարի:

Այս մաղթանքից հետո, ահա, սկսվում էր հարյուրավոր քառյակների շքերթը շրջապատող բազմության մեջ, դրական վիճակ ընկած նշանի տիրոջ ուրախությունը կիսելու, բացասականին մխիթարելու ժամանակը: Երգվում էր մեկ քառյակ, և, մինչ խումբը կրկներգում էր՝ «Ջան, վիճակ, ջան, ջան...»՝ փարչի մոտ քողի տակ նստած «Հարսը» հանում էր որևէ մեկի նշանը, ում և վերաբերում էր քառատողի իմաստը:

Վանում ջոկում էին մի քանի անմեղ փոքրիկ երեխաներ, նրանցից վիճակով ընտրում էին մեկին կամ երկուսին, որ հերթով հանեին նշանները: Երկուսի մեջտեղը դնում էին խորհրդավոր փարչը և երեքին միասին ծածկում անթափանց մեծ քողով: Երկու փոքրիկները, որոնց Վիճակահարս էին ասում, ձեռները մինչև արմունկները վեր քաշած, խառնում էին Փարչի ջուրը և միջի նշանները: Աղջիկները սկսում էին երգել վիճակի երգերը տուն առ տուն: Ամեն մի տուն երգից հետո Հարսը մի նշան էր դուրս բերում ջրից, մեկն էլ կանգնում և ցույց էր տալիս բոլորին: Ըստ այդ երգերի, աղջիկների և մյուսների համար շոշափվում էր ընտանիք կազմելու, երջանիկ

ապագայի կամ ապերջանկության հետ կապված հարցեր: Եթե լինում էին վիճակահանությունից դժգոհողներ, վերջում չէին ցրվում: Փարչի ջուրը լցնում էին մի թասի մեջ: Երկու աղջիկներ, որոնք իրենց ընտանիքի առաջնեկն էին, բութ մատներով բռնում էին թասը: Դժգոհը մոտենում էր, վերջին անգամ խորհուրդ էր անում և մատը քսում ջրի երեսին: Եթե ջուրը ձախ պտտվեր, նշան էր, թե վատ գուշակությունն անպայման կկատարվեր, իսկ եթե աջ պտտվեր, նշանակում էր, թե կարող էր փոխվել վատ գուշակությունը: Այս գործողությունը վերջին ապավենն էր, ուստի թաս բռնողները ճարպկությամբ այնպիսի ծածուկ շարժում էին անում, որ ջուրը աջ էր պտտվում, որով մեղմանում էր դժգոհողների տխրությունը:
Վիճակի ջուրը գետնին չէին թափում, այլ լցնում էին հոսող ջրի մեջ, քսում մազերին, որ երկարեին, շաղ էին տալիս արտերում, խոտհարքներում: Շիրակում նույնիսկ հիվանդատերերը այդ ջրից տանում էին, քսում իրենց հիվանդի գլխին, որպեսզի վերջինս շուտ առողջանա ու կազդուրվի: Երեկոյան տուն վերադառնալուց առաջ Վիճակի տիկնիկը մաս – մաս էր արվում, ամեն մեկը նրա վրա կախած իր զարդն էր վերցնում: Մերկացած տիկնիկը մնում էր դաշտում:
Համբարձումից մինչև Վարդավառ ուխտատեղի չէին գնում, համարելով, որ սրբերը համբարձված են: Այդ ընթացքում ոմանք (հատկապես անժառանգները) պահում էին ս. Կարապետի պասը, որն ավարտվում էր Վարդավառին դեպի Մշո ս. Կարապետ ուխտագնացությամբ:

ՎԱՐԴԱՎԱՌ, ՎԱՐԹԻՎԵՐ, ՎԱՐԹԵՎՈՐ, ՎԱՐԴԵՎՈՐ

Ամեն տարի շքեղ հանդիսությամբ, տոնական շարականներով ու աղոթքներով, Զատիկին հաջորդող 14-րդ կիրակի օրը մեր Եկեղեցին տոնում է Պայծառակերպության կամ Այլակերպության տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվամբ:
«Այդ օրը Հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Աստվածորդու դեմքը փայլեց՝ ինչպես արեգակ, զգեստները շողարձակեցին՝ ինչպես լույսը: Հանկարծ առաքյալներին երևացին Մովսես և Եղիա մարգարեները, ովքեր խոսում էին Հիսուսի հետ: Մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, և ամպից լսվեց մի ձայն, որ ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեք»: Եկեղեցական մեկնաբանությամբ Քրիստոսն է նմանեցվում վարդի, ու եթե «մինչ ի յայլակերպություն որպէս թէ վարդ ի կոկոնի էր, եւ յայլակերպիլն՝ ի թաբօր՝ իբր թէ վարդ վառեցաւ» (Տ. Թորգոմ պատրիարք): Ավանդությունը պայծառակերպության վայր է համարում Թաբոր լեռը, որի վրա էլ հետագայում կառուցվել է եկեղեցի՝ ի հիշատակ Տիրոջ պայծառակերպության»:
Հայաստանի որոշ շրջաններում երբեմն ժողովուրդը Վարդավառը նշում էր հուլիսի 22 - ին հաջորդող կիրակի օրը, չնայած որ այն կարող էր ընկնել հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը:

Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն էլ բնութագրում են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները: Մի տարբերակով «վարդավառ» բառը կազմված է վարդ(ուարդ) – ջուր և վառ – սրսկել, լվանալ արմատներից, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական արարողակարգի գլխավոր մասը: Որոշ հեղինակների կարծիքով էլ այն նշանակում է «կրակավառ», «հրավառ»: Եվ, իրոք, հուլիսին, այսինքն հրոտից ամսին, երբ արևը հասնում է իր կիզակետին, հրավառվում, չորանում է բնությունը, մարդիկ զանգվածաբար ջրցանություն են կատարում և աստվածներից ջուր խնդրում:
Վաղ ժամանակներում հայերը, շատ ազգերի նման, բնության ուժերին վերագրում էին գերբնական հատկություն և ուժ: Առանձնապես մեծ պաշտամունքի էին արժանացել ջուրն ու կրակը, որոնք կենսական նշանակություն ունեին մարդկանց համար: Կրակապաշտության հետքերը տեսանք Տյառնընդառաջին, իսկ ջրի պաշտամունքը ցայտուն երևում է Վարդավառի տոնի մեջ: Ըստ ավանդության, երբ Նոյ նահապետը դուրս եկավ տապանից, առաջին ամիսը կոչեց Նավասարդ (նորոգված աշխարհ): Ջրհեղեղից ազատվելու հիշատակը անմոռաց դարձնելու նպատակով Նոյն առաջարկեց իր տղաներին ջուր լցնել իր վրա: Ահա ջրի այդ պաշտամունքն է, որ առաջին հերթին աչքի է ընկնում Վարդավառին:
Բասենում Վարդավառի կիրակի օրվա Պատարագի ժամանակ եկեղեցու բեմը և սեղանը զարդարում էին բազմատեսակ ծաղիկներով ու բազմաթիվ վարդափնջերով: Մինչ եկեղեցում երգում էին «Խորհուրդ խորին», «Սուրբ, սուրբ», «Մարմին տերունական»-ը, դրսում երիտասարդները աղավնի էին թռցնում: Դա, ըստ երևույթին, կապված էր Նոյան աղավնու և Անահիտ (ծննդաբերության և պտղաբերության) աստվածուհու տոների հետ: Հանդիսականների հիացական բացականչությունների ներքո աղավնիները ցույց էին տալիս իրենց տերերի աղավնի վարժեցնելու հմտությունն ու սեփական վարպետությունը: Եթե աղավնին երեք անգամ պտտվում էր սիրած աղջկա տան կտուրին, նույն աշնանը հարսնության էին տանում նրան:
Առավոտյան ժամերգությունից հետո, ամեն մի ընտանիք մատաղ էր անում: Զոհաբերում էին գառ, ուլ, փոքրիկ հորթ, իսկ չունևորները՝ աքլոր, հավ կամ աղավնի: Ընդունված կարգ էր, որ մատաղը մորթեն կտուրներում, և արյունը պատի վրայով իջնի ներքև: Մատաղը բաժանում էին հարևաններին, ճամփորդներին, հովիվներին, նախրապաններին և բոլոր նրանց, ով պատահեր: Գամիրքում ավելի ընդունված էր ուլերի զոհաբերությունը: Վարդավառը այստեղ մորթվող ուլերի առատության պատճառով կոչվում էր ողլան ղռան (ուլի կոտորած):
Վարդավառը ուխտագնացությունների տոն էր: Ամենասիրված ուխտատեղը Մշո ս. Կարապետի վանքն էր: Համբարձումից հետո, քանի դեռ «սրբերը համբարձված էին», ուխտագնացություն չէր եղել, սա ամառվա առաջին տոնն էր, սիրված, սպասված տոնը: Արցախում գտնում էին, որ Վարդավառին բոլոր սրբերի վրա լույս է իջնում, ով որ տեսնի այդ լույսը, ինչ խնդրի՝ կկատարվի: Պատմում են նաև, թե Հոգեգալստին բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ Վարդավառին կրկին իջնում իրենց տեղը՝

ընդունելով լուսավոր աստղերի կերպարանք: Ով աստղերի իջնելը տեսնի ու մի բան խնդրի՝ կկատարվի:
Մինչև Վարդավառ ընդունված էր խնձոր չուտել, «խնձորի պաս» էր: Տարվա առաջին խնձորն ուտում էին Վարդավառին, ինչպես առաջին խաղողն ուտում էին Վերափոխման կամ Խաղողօրհնեքի տոնին: Շատախում առաջին խնձորը վայելելը ուղեկցվում էր հատուկ նախապատրաստություններով: Շաբաթ երեկոյան դեզեր էին շինում, որոնցից մեկը պետք է մյուսներից մեծ լիներ: Մութն ընկնելուն պես հերթով սկսում էին վառել մանր դեզերը, որը տևելու էր մինչև լուսաբաց: Վառվող դեզերի մեջ խորովում էին խնձորը և ուտում:

Տոնի համն ու հոտը կազմում էին համատարած ջրցանությունները: Դրանք պարզապես խաղեր չէին, այլ Վարդավառի տոնի հանդիսավոր արարողություն, որն ուղղակի անհրաժեշտություն էր: Ջուր ցանելուն շատ տեղերում ասում էին «վարդավառի տալ»: Վաղ առավոտից իրար վրա ջուր էին լցնում բոլորը՝ ով ինչով կարող էր: Հաշվի չէին առնում ոչ տարիքը, ոչ սեռը, ոչ հասարակական դիրքը: Ջուր էին շփում չխոսկան հարսները սկեսրայրի վրա, առօրյայում քավորի ներկայությունից խուսափող սանամայրն անգամ՝ քավորի վրա: Հատկապես երիտասարդները, առուների եզրին հավաքվելով, ժամեր շարունակ ուրախ կատակներով, ճիչ ու աղմուկով ջուր էին ցողում միմյանց վրա: Մարդիկ իրար նույնիսկ հրում, գցում էին առուներն ու աղբյուրները: Ջուրն էր այդ օրվա տերը, ուրախության առիթը, տոնը բնութագրողը: Ինչպես շատ ազգերի, այնպես էլ հայերի մոտ ջուրն էր կյանք տվողը, պտղաբերողը, սրբիչը, մաքրիչն ու բժշկողը: Վարդավառի տոնախմբությունը կատարվում էր ոչ միայն գյուղերի ներսում կամ եկեղեցու բակում, այլև հանդերում, ձորերում, աղբյուրների ու գետերի ափերին:

Նախիջևանում վաղ առավոտյան կանայք, թելերի վրա ծաղիկներ, խնձոր, մանր վարունգ և վարդեր ամրացնելով, խաչաձև կապում էին երեխաների կրծքին և տանում եկեղեցի:
Վարդավառը համընկնում էր դաշտերում հասունացած հացահատիկների հավաքին: Տոնի օրը գրեթե ամենուր հասկեր էին տանում եկեղեցի ՝ խնդրելով, որ դաշտերը կարկուտից ու մորեխից անվնաս մնան: Ցորենի հասկերից «Խաչբուռ» էին պատրաստում: Դրանք լինում էին խաչաձև, ծառի ճյուղի, ծաղկեփնջի նման և այլն: «Խաչբուռը» պատրաստում էին հետևյալ կերպ. վերցնում էին մի քանի ցորենի հասկ ցողունով, կազմում փոքրիկ փունջ: Թելն ամուր պտտում էին փնջի ցողունի մասով, ստացվում էր ցորենի հասկերից կազմած փոքրիկ ծաղկեփունջ: Մի քանի այդպիսի փնջերը վարպետորեն իրար միացնելով պատրաստում էին իրենց ուզած «Խաչբուռը»: Աղջիկներն էլ մոտավորապես նույնն (Տավուշում) անում էին ծաղիկներով: Տոնի նախորդ օրը ամբողջ ցերեկը շրջում էին դաշտերում, բազմագույն, հատկապես «վարթիվերի» կոչվող դեղնագույն ծաղիկը հավաքում, խաչաձև փնջեր անում և գիշերը գաղտնի նետում իրենց թաղեկիցների կամ հարազատների բակը: Իսկ նշանված աղջիկները մի քանի այդպիսի խաչ-փնջերից «կսկրանք» էին պատրաստում (օջախին դրվող եռոտանու նման) և ուղարկում նշանածի ընտանիքին: «Խաչբուռ», «կսկրանք»,

«խաչ-փունջ» ստացող տանտիկինները, որպես օրվա գլխավոր զարդ ու խորհրդանիշ, դրանք դնում էին ցորենի կամ ալյուրի ամբարի վրա: Հաջորդ օրը՝ բուն Վարդավառի առավոտյան, խաչ-փնջեր բաժանած աղջիկները տնետուն էին շրջում և ծաղկափայ հավաքում՝ զանազան կաթնամթերք, ձու, անուշեղեն և այլն: Որոշ տեղերում ծաղկախաչերով զարդարում էին կենդանիների վիզը, կոտոշը, ճակատը և պտտում՝ նույնպես առատորեն ստանալով իրենց բաժինը:

Ագուլիսում Վարդավառից առաջ նշանված աղջիկները մի ամանի մեջ ցորեն կամ գարի էին կանաչեցնում: Վարդավառին մի երեխայի հասակի չափ փայտ էին տնկում այդ կանաչի մեջ ու զարդարում մանր վարունգով, խնձորով ու վարդերով: Փայտը հաճախ թևավոր էր լինում: Այս զարդարած փայտը կանաչի հետ միասին կոչվում էր «Խնդում»: Տոնի կեսօրից հետո, տարեց կանանցից մեկը վերցնում էր այդ «Խնդում»-ը տանում դնում գյուղի հրապարակում և «հսկում» նրան: Հանդիսականները «Խնդում»-ի շուրջը պարում էին զուռնայի նվագով: Բավական ժամանակ պարելուց հետո պառավը վերցնում էր «Խնդում»-ը, դնում գլխին ու պարում՝ երգելով.

Խնդում օնիմ վարդավ լի,
Զըրդրփչեծ խնձուր լի,
Վախիմ, թա քունըս տանի,
Խնդումըս յաղին տանի:

Սա թարգմանաբար լինում է.

Խնդում ունեմ վարդով լի,
Զարդարված խնձորով լի,
Վախենամ՝ քունս տանի,
Խնդումս չարը տանի:

Այդ ժամանակ տղամարդիկ հանկարծ հարձակվում էին նրա վրա: Երիտասարդներից ճարպիկը գավազանով խփում էր «Խնդում»-ին ու վայր գլորում: Իսկույն բոլորը վրա էին պրծնում և խլխլում ծաղիկներն ու մրգերը: Այնուհետև հանդիսականները ցրվում էին, իսկ պառավը կեղծ անիծում էր: Այդ անեծքներն ավելի շատ ծիծաղի, քան վրդովմունքի տեղիք էին տալիս: Դրանց իմաստը կարող էր լինել. «Աստված քու ջանիդ քոր տա, բութ մատիդ եղունգ չտա, որ քորես», «Էնքան նիհարես, որ ասեղի ծակով անցնես» և այլն:
Բացի ջրախաղերից, տեղի էին ունենում բազմաթիվ խաղեր՝ ջիրիդ, ձիարշավներ, գոտեմարտեր, զանազան ճոճախաղեր, ճլորթի և այլն: Առանձնապես մեծ ուրախություն էին պատճառում լարախաղացներն իրենց բազմաթիվ ձևերով: Վարդավառը ցնծության, կերուխումի, երգ ու պարի տոն էր՝ ողողված վարդերով,

ծաղիկներով ու ջրով: Տաղավար տոներից ոչ մեկն էլ չունի այս տոնի մասսայական բնույթն ու գրավչությունը:

✓ Վարդավառը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Այ գյուղում կանչող աղջիկ,
Ձենդ ծլվլալիս ա:

✓ Վարդ ի բացվե առավոտվան խաղերով,
Իմ յար բաղջեն վարդ կը քաղի մաղերով,
Վարդն ի բացվե Վարթեվրվան կիրակին,
Քո սերն ինկէ մեջ իմ սրտի պուրակին:

✓ Վարդ եմ քաղե մաղերով,
Վեր եմ դրե շաղերով,
Հրես եկավ իմ ախպեր,
Ալ ձին տակին խաղալով:

ԱՆՁՐԵՎԱԲԵՐ ԵՎ ԱՆՁՐԵՎԱԽԱՓԱՆ ԾԵՍԵՐԻ ԵՐԿՀԱԿԱԴԻՐ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ
ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

http://hpj.asj-oa.am/3848/1/2004-3(217).pdf

Վաղնջական մշակույթի ընդերքում ձևավորվել են բնության անշունչ առարկաների, մարդկանց և կենդանիների փոխադարձ կերպարանափոխման ու ոգեղենացման հավատալիքները: Մինչև XX դ. սկզբները հայոց մեջ կենցաղավարում էին այդ պաշտամունքի հետքերը:

Ստորև կքննարկվեն անձրևաբեր և անձրևախափան երկհակադիր ծեսերի ու մասնավորապես Նուրինի (Ճոլիի) բանահյուսական և ազգագրական արմատները: Վերոհիշյալ ծեսերը, առաջանալով տոհմացեղային ժամանակներում, առնչվում են մթնոլորտային երևույթների պաշտամունքին:

Բնության և հասարակության երկհակադրության, հատկապես ջրի տարերքի հետ է կապվում երկվորյակ աստվածությունների պաշտամունքը:

Դրանց ավանդաբար վերադրվում են եղանակի կարգավորման, տիեզերական կարգուկանոնի հաստատման պատկերացումներ: Այդ հավատալիքների լուսաբանումն ուղղակիորեն հարաբերվում է տվյալ ժողովրդի ծագման պայմանների, աշխարհագրական դիրքի, բնակլիմայական միջավայրի, էթնոմշակութային յուրահատկությունների հետ: Ծիսահմայական միջավայրին բնորոշ է տարբեր կենդանիների անձրևաբեր հատկանիշների վերագրումը. ցուլը,

այծը, ոչխարը, եզը և այլն, եղել են պաշտվող կենդանիներ (եզան և այլ տոտեմ կենդանիների գանգերը պահում էին արտերի պատերի մոտ, այգիների վրա իբրև բերքը չար աչքից պաշտպանող բարի ոգիներ: «Ազգագրական հանդես»(այսուհետև՝ ԱՀ), II, Թիֆլիս, 1897, էջ՝ 241, ԱՀ, X, Թիֆլիս, 1903վ,էջ՝ 194, ԱՀ, VI, Թիֆլիս, 1900, էջ՝ 150): Հնդեվրոպական և հայ կրոնաառասպելաբանական համակարգում ևս իրենց արտացոլումն են գտել համատիեզերական երևույթների ու պատկերացումների երկհակադիր ընկալումները (հմմտ. բարու և չարի, աստվածայինի և դիվայինի, վերի և վարի (երկինք / երկիր), արականի և իգականի, տաքի և սառի, խոնավի և չորի, կյանքի և մահվան և այլ հակադրությունների հետ): Հայ ժողովրդական հավատքի առանցքն է կազմում բարի լույսի և մութ խավարի հակադրությունը: Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի հակոտնյա բնույթն առավել տեսանելի է երկրագործական պաշտամունքի համալիրում: 12 կենդանակերպերը և աստղատուն ընդգրկող խմբերը «հողագործների կարծիքով
օժտված էին չար և բարի ուժերով»: (Վ. Հ. Բդոյան . Երկրագործական մշակույթը Հայաստանում. Երևան, 1972, էջ 481՝. 218 Թամար Հայրապետյան)
Այդ ուժերի հակամարտության արդյունքում ամպրոպային հսկան հաղթում է դևին (վիշապին),մարդկանց ուղարկում բարեբեր անձրև և ապա արեգակնային լույս, պտղավորման միջոցով ապահովում վերածնման գաղափարը, որը վիշապի սպանության ծիսական արարողության բուն նպատակն է:

«Կապված երկինքը» , գետի չորացած հունը կամ պապակված աղբյուրի ակը բացելու վիշապամարտի մոտիվը բնորոշ է ինչպես հայ ժողովրդական հեքիաթներին, այնպես էլ դյուցազնավեպին («Սասնա ծռերի» առաջին ճյուղի երկրորդ մասը հիշեցնում է մի ամպրոպային առասպել, որտեղ Սանասարն իբրև վիշապամարտիկ, մութ ու սակավաջուր Պղնձե քաղաքի
արևափայլ արքայադստերը տիրանալու համար ծովում կռվում է վիշապի հետ՝ ձեռք բերելով ոսկի խնձորն ու վիշապի գլխի թանկագին քարը: Պարտվելով՝ վիշապը քաղաքի վրա ջուր է թափում. «Ինչըխ անձրև գա, ընցկուն զքաղաք էթաց»: Հնագույն պաշտամունքի համաձայն խնձորը խորհրդանշում է արական կարողությունը, քարը՝ ամպրոպային աստծո զենքը, իսկ ծովը՝ երկինքը, քանի որ մեկ այլ հայտնի պատկերացմամբ օվկիանոսի վրա է երկնքի ծայրն ու վերջը, որտեղ պարտվելով վիշապը կորցնում է վերոհիշյալ բոլոր առասպելական խորհրդանիշները և բացում ջրի ակը (Մ. Աբեղյան. Երկեր. Հ. է, Երևան, 1975, էջ 73): Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Ս.Հարությունյան . Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000, էջ՝ 168—169):
Այս հայտնի մոտիվի հետ է առնչվում «տղամարդու հագուստ - կապուստով» կանանց կողմից չորացած դետի հունը ընթացքին հակառակ վարելը: Կարծում ենք՝ հակառակ ուղղությունը կարելի է բացատրել ծեսի բուն նպատակը (*Ճանապարհը դեպի երկինք) գաղտնագրելու (Ա. Թադևոսյանի կարծիքով չորացած գետի հունը ենթադրում է վիշապի առկայությունը երկնքում, որտեղ գտնվում է ակունքը և, քանի որ, իբրև երկնային ծագմամբ գործիքի, գութանին բնորոշ է նաև ֆալոսային սիմվոլիկան, կարելի է ենթադրել, որ գութանն այն զենքն է, որով սպանվում է ակունքը փակող վիշապը (Հայ*

ժողովրդական մշակույթ. Հանրապետական դիտական նստաշրջան, IX զեկուցումների հիմնադրույթներ. Երևան, 1997, էջ՝14), իսկ տղամարդկանց արտաքինն ու հատկապես առնականության հատկանիշն ընդօրինակելը՝ ջրային տարերքի աստվածուհուն գայթակղելու հանգամանքով:

Անձրևը ցանկալի է, քանի նպաստում է հողի արգասավորությանը, մինչդեռ անդադար անձրևը առաջադրում է ցանքատարածությունները աղետից փրկելու տրամագծորեն հակառակ պահանջ՝ արև: Ուշագրավ է, որ եղանակը «շրջելու» ծեսերի ժամանակ «դերակատարները» գլխավորապես այրի կանայք ու դեռատի աղջիկներ էին, տղամարդիկ հանդիսատեսի կարգավիճակում էին, իսկ պառավ կանանց մասնակցությունը ցանկալի չէր (*բացառություն է տարեց կին-մաճկալը, ինչպես նաև անձրևաբեր Չիչի – Մաման, որի «դերակատարը» առույգ և դիմացկուն պառավն է: Իսկ Շապին-Գարահիսարում պառավին կարող էր փոխարինել ցնցոտիներով զգեստավորված մի աղջիկ կամ նույնիսկ տղա, որը Ջրրջեր - Մամա կամ Խիում Խաթուն էր կոչվում («Նոր-Դար», 1893, N"67, Շապին-Գարահիսարի խաղերը, ձեռագիր ժողովածու, գրի առավ Գ. Հյուսիսյան, 1952, էջ՝31—32: Տես՝Վ. Բդոյան . Հայ ժողովրդական խաղեր. հ. 1, Երևան, 1963, էջ՝281*): Այս հանգամանքը կարելի է բացատրել պառավների վերարտադրության կենսաբանական գործառույթի կորստով, չկենակցող այրիների ու աղջիկների մաքրությամբ, նրանց պտղաբերության հնարավորության և հողի արգասավորության աղերսներով: Ընդհանուր առմամբ, ծեսի մեջ կանանց «մենաշնորհը» դիտվում է իբրև վերապրուկ այն հեռավոր ժամանակների, երբ հողի մշակությամբ բացառապես կանայք էին զբաղվում (ըստ հունական առասպելի առաջին անգամ պտղաբերության և երկրագործության աստվածուհի Դեմետրան է էլևսինյան թագավորի որդու Տրիպտոլեմոսի միջոցով մարդկանց սովորեցրել հողը մշակելու ձևերը միշտ հանդես գալով հացահատիկը հովանավորողի դերում և համարվելով «Մայր երկրի» (Դիցաբանական բառարան. Երևան, 1985, էջ 57): ----------
Վանեցիների կարծիքով, իրենց ամբարած ցորենը թանկ վաճառելու նպատակով հացատերերը «էշ մ ողջ - ողջ թաղած են» , որն իբրև չար հուռութք կամ հմայք կարող է երաշտ առաջ բերել: Ակայն ժողովուրդն ինչպես ամեն տեղ, այստեղ էլ ունի *անձրև տեղացնելու* կամ *չտեղացնելու*
(ընդգծումը՝ Թ. Հ.) իր հմայքները: Եվ եթե էշին կենդանի թաղելով խափանվել է անձրևը, ապա «պղնձացած երկնքեն անձրև իջեցնելու համար բարեգուչակ նշան է համարվել էշին զռալն ու լիաշունչ օդ շնչելը» (Մ. Մկրյան. Խունձկուլուլուն ու Թուխ - Մանուկներ.- «Բիւրակն», 1898, էջ 411-
412, Գ . Սրվնձտյան. Մանանա. Կոստանդնուպոլիս, 1876, 116):
Նմանատիպ նախապաշարմունքներ ունեին նաև բայազետցիները (էգ օձի արյունով որձ օձի գլխին գիր գրելը», անտեղյակ մարդու վարձելով խմորահունց խանձարուրի օրորելը)(ԱՀ, XVII, 1908, էջ՝ 97) , որոնք անձրևաբեր դյութանքներ էին: Սակայն հետաքրքիր է նկատել, որ ի տարբերություն վանեցիների՝ բայազետցիների համար էշի զռռոցը անձրևախափան նշանակություն է ունեցել(նույն տեղում): Նույնատիպ միջոցներով իրականացվող տրամագծորեն հակառակ ծիսական արարողությունները

վկայում են, որ հաճախ նույն կախարդանքով հնարավոր է եղել և՛ արև կանչել, և՛ անձրև, և՛ բացել երկինքը, և փակել: Նույնպիսի երկակի հավատալիք կար նաև Վարանդայում (նույն տեղում, II, էջ՝ 192), և Զանգեզուրում («*Քարը ձգում են ջրի մեջ և նրա մեջ թողնում մի նկատելի տեղ, որ երբ արդեն հարկավոր չի լինի տանեն ետ, դնեն հին տեղը, թե չէ սաստիկ անձրևը կարող է սրբել, տանել բոլոր ցանքսերը։» (Ստ. Լիսիցյան . Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ 129, "Сборник материалов для описания местностей и племен Кавказа"*, *с. 115, Պ. Պռոշյան. Երկերի ժողովածու. հ. 1*, *Երևան*, *1953. էջ՝93*)):
Անձրևաբեր պաշտամունքի վերապրուկներից են շինծու պատերազմի միջոցով ավարած ոչխարի զննումն ու մեծ հանդեսով գլուխը գետը ձգելը (Գ. Սրվանձտյան. Մանանա, էջ 116), օտարազգիների գերեզմաններից գաղտագողի գանգեր հանելն ու ջուր նետելը (որը մարդկային զոհ մատուցելու սովորության մնացուկներից է Հայաստանում (ԱՀ, IV, 1898, էջ՝ 107)) , կանանց կողմից տղամարդկանց արտաքին հատկանիշներն ու զբաղմունքն ընդօրինակելը (փափախ դնելն ու տղամարդու հագուստ կրելը, սպառազինվելը, իբրև տղամարդու առնականության հատկանիշ շերեփն առջևից կախելը, կանանց կողմից գետի ընթացքին հակառակ վար անելը(*անձրև բերելու այս սովորությունը հայտնի էր նաև հույներին ու սլավոններին, աբխազներին, Կախեթի վրացիներին, տես՝Մ. Աբեղյան. նշվ. աշխ. , էջ 77: Д ж. Фрезер. Золотая ветвь. I, М.-Л. , 1931, с. 88-89; Г. Ф. Чурсин. Праздник "выхода плуга" горских народов Дагестана. Тифлис, 1927, с. 17.*), եզներին որպես հոտաղ քշելն ու աղմուկով հայհոյել ը և այլն) :
Երաշտից ոչ պակաս աղետներ պատճառող անձրևից ազատվելու համար ժողովուրդը նաև երկինքը կապող կախարդական հնարքների էր դիմում . ճրագներ էր վառում, խաչերկաթը դուրս էր հանում, եկեղեցու զանգերն էր խփում, առաջնեկ տղաները կարկտի հատիկը դռան շեմին դանակով կտրում էին (ԱՀ, XVII, էջ՝ 97), քահանայի տնից ավել էին գողանում և այրում (*ԱՀ, VI, էջ՝347, Հ. Նաղարեանց. Նախասպաշարմունք. հ. I, Տփխիս, 1878, էջ 44), ջրով լիքը ամանը թաղում էին (նույն տեղում*), գեղջուկ կրտսեր տղայի ոտքի ցեխը կրակն էին գցում (*նույն տեղում*) , կալսելու ժամանակ կալի միջով շրով լի սափորով չէին անցնում(ոույն տեղում), էշի աչքերին սուրմա և հոնքերին հինա էին քսում (նույն տեղում), առաջնեկ երեխայի հետույքը բացում, անձրևին ցույց տալիս (Ստ. Լիսիցյան. նշվ.աշխ. , էջ 129) և այլն:
Բանահյուսական և ազգագրական նյութը վկայում է այն անձրևաբեր ծեսերի ու երգերի բազմազանության մասին, որոնք առնչվում են Նուրինի հետ (Նուրինի նկարագրությանը ծիսական երգով հանդերձ առաջինը հանդիպում ենք Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպում (1860), իսկ իբրև ազգագրական երևույթ Նուրինի փոփոխակները գրի են առնվել 1870-ական թվականներից սկսած: Առաջինը գրի է առել Գ.Սրվանձտյանը՝ առանց ծիսական երգի: Ըստ այդ հաղորդման, «փայտաձողի վրա լաթեր էին փաթաթում և մարդու ձև տալիս» (Գ. Սրվանձտյան . Մանանա, էջ՝ 116): Ամբողջ Հայաստանում անձրևաբեր ոգի Համարվող Նուրինն ուներ իր անվան տարբերակները՝ Խուրծկուլուլա, Խուչկուրուրա, Խուշկուրուրիկ, Ուրրաթեկին, Պուրպատիկին, Մանկակուրա, Ուշխուրուճի, Շերեփ տիկնիկ, Չամչախաթուն, Մամա-Չթթիկ և այլն: Մ. Աբեղյանը

խուրծկուլուլա բառի սկզբնամասի մեջ տեսնում է խրծիկ բառի արմատը՝ խուրծ - տիկնիկ
նշանակությամբ (*Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ՝169*)): Անձրևաբեր և անձրևախափան երգերը, լինելով հակադիր նշանակությամբ ծիսական երգեր, միաժամանակ ունեն որոշակի ընդհանրություններ:
Փորձենք համեմատել Ա. Ղազիյանի կողմից Արցախում գրառված անձրևախափան Գոգիի (Ա. Ղազիյան. Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ). 15, Երևան. 1983, էջ՝ 156) և Տ. Նավասարդյանի հրատարակած անձրևաբեր Նուրինի (Տ. Նավասարդյան . Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք VI, Թիֆլիս, 1890, էջ՝ 107) փոփոխակներից մեկը: Շրջայցերի ժամանակ ծույլ ու անբան (*Ս. Ամատունի. Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912, էջ՝146*) Գոդիի «ծվծվոցից, կրթկթոցից» հոգնած ծիսական թափորը, երգի առաջին տողերից սկսած անիծում է ալարկոտ Գոդիին անդադար անձրևը խափանող իր կախարդական հնարքները չգործադրելու համար: Գոգին իգական սեռին պատկանող անձրևախափան խրտվիլակ է (անեծքն է հուշում Գոդիի սեռը՝ «Մարդը մեռած, այ Գոդի, տղան մեռած, այ Գոդի» և երգի «փուշի տվեքյ վարսը քսիմ» տողը): Արարողության մասնակիցները, դժգոհելով Գոդիից, «ցորտ - ցորտ ըխպրեքյ, կարմիր արև ու կանաչ սարեր» են ուզում տիրոջից:
Տեղին է փաստել, որ թեև Գոդին ընդունված է համարել անձրևախափան երգ, սակայն Գոդիի Արցախում գրառված մեկ այլ տարբերակում նույն ծիսական տիկնիկից ժողովուրդն արևի փոխարեն անձրև է հայցում «Թոռն ըմ օգում աշխարքը թըրջի», որն էլ վկայում է Գոդիի երկակի և՛ անձրևախափան, և՛ անձրևաբեր գործառույթի մասին (*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ) FFVII : 6189,01 - 6189,01, 6197, 02 – 6198,00 (Ս. Վարդանյանի հավաքածու*), Արցախ, 1970: Այս աղբյուրի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում բանագետ Սվետլանա Վարդանյանին):

Ի հակադրություն Գոդիի, անձրևաբեր Նուրինին ուղղված երգը սկսվում է հուրի - փերի տիկնիկի փառաբանությամբ.

Նուրին, Նուրին էկել ա,
Աջբահուրին էկել ա,
Շիլա շապիկ հագել ա: (Տ. Նավասարդյան. նշվ. աշխ., էջ՝ 491:)

Ծիսական շրջիկ խումբը ժողովրդի փափագը ամփոփում է հետևյալ աստվածահաճո տողերում.

Բարով Աստծով անձրև գա.
Ձեր Հոր արտեր կանաչնա(Նույն տեղում):

Գոդիի նման Նուրինը նույնպես իգական սեռի հատկանիշներ ունի՝«Եղ բերեք մազը քսենք»: Մամա – Չթթիկը, Չիչի Մաման և Չամչա Խաթունը Նուրինի տարբեր անուններն են՝ տատ, մեծ մայր նշանակությամբ (Վ. Հ. Բդոյան. նշվ. աշխ., էջ՝ 491):
Փաստորեն և՛ Գոդին, և՛ Նուրին մարդակերպ տիկնիկներ են և հատկապես Նուրինը (փառաբանված լինելու շնորհիվ) կարող էր միջնորդ դիտվել մարդկանց և աստվածների միջև: Անձրևաբեր և անձրևախափան զորությամբ օժտված ժայռերը բարձրանալու

մոգարգելքը (տաբուն), անտարակույս, հուշում է Նուրինի աստվածային ծագման մասին (Ջրային տարերքի աստվածուհին Հայաստանում Համարվում է Նարը, որի արձանը Նուրինն է: Այդ մասին ավելի մանրամասն տես Գր. Ղափանցյան. Ջրահարսի պաշտամունքը հայերի մոտ.— «Խորհրդային գրականություն», 1940, թիվ 6, էջ՝ 124—135: «Մի անգամ մի տղա ծաղրել է այդ քարը և վեր կացել կանգնել վրան, բայց անմիջապես ոտներ կուչ են եկել» (Եր. Լալայան. Երկեր. հ. 2, Երևան, 1988, էջ՝ 156):
Նախնական պատկերացումների համաձայն ժայռը (սարը) երկինքն ու երկիրը կապող միջանկյալ օղակ է, և սարերի ու ժայռերի վրա էին բնակվում մի շարք հնդեվրոպական ժողովուրդների աստվածներ ու աստվածուհիներ ևս (" *В. В. И в а н о в, В. Н. 'Г о п о р о в. Исследование в области славянских древностей. Лингвистические и фразеологические вопросы реконструкции текстов. М., 1974, с. 7; они же. Перкунас. — "Мифы народов мира" (далее — МНМ). Т. 2, М.,1998, с. 303-304*.):

Փաստական նյութի տրամաբանությամբ մեզ առավել հետաքրքրում են ավելի կամ փայտաձողի վրա լաթեր հագած արցախյան և զանգեզուրյան ծիսական խամաճիկի՝ ճոլիի ա նձրևաբե՞ր, թե՞ անձրևախափան բնույթը, նրա բանահյուսական և ազգագրական արմատները:

Ի տարբերություն Գոդիի և Նուրինի ծիսական երգերի, որ սկսվում են համապատասխանխան խրտվիլակների նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքով, Ճոլին առաջադրում է բանաձև.
ճոլի – վալի՝ ճոլ չի կա,
Խավիծ անիմ՝ եղ չիկա(ՀԱԲ, 15, էջ՝ 156):
Բանաձևի տակ թաքնված խորհուրդը հայտնի է եղել արարողության մասնակիցներին, թեև բացահայտ չի խոսվել այդ մասին (*ՀԱԻԲԱ, Բարխուդար Ղազիյանի ֆոնդ, Արցախ, N1 տետր, 1973*): Ամենայն հավանականությամբ, ծեսի բուն նպատակը գաղտնագրվել է խորհրդանշային ցուցիչով (կոդով), որպեսզի չարքերը չկարողանան խափանել այն (*Խորհրդանշային ցուցիչն առկա է նաև Նուրինի տարբերակներից մեկի «էրթկեն կուզե՞ք, թե՞ դռնեն» հարցման մեջ: Երբ ծիսական թափորը դռնից է ջուր ուզում՝ Նուրինի վրա երդիկից են լցնում և, ընդհակառակը, դռնից են լցնում, եթե նրանք երդիկից են ուզում (ԱՀ, /, Շուշի, 1896, էջ՝360*)):

Ծիսական թափորը ուղիներ է որոնում Ճոլին ծովից դուրս բերելու համար և, պատահական չէ, որ դիմում է պարան ի օգնությանը.
Քյանդիր պերեքյ՝ տյուս օնինք,
Չուվան պերեքյ՝ կցան տանք(ՀԱԲ, 15, էջ՝ 156):
«Քյանդիրն ու չուվանը», ըստ երևույթին խորհրդանշում են պարանի հմայական հատկությունը, որին հայոց մեջ վերապահված է չար ուժերին հալածելու ծիսական գործառույթ:
«Հայերեն գավառական բառարանում» ճոլը համարվում է ղարաբաղյան անհայտ իմաստով բառ, որը գործածվել է Ճոլի ծիսական երգում:
(*Հր. Աճառյան. Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետև ԷԱԺ*). Հ. Թ (Հայերեն գավառական բառարան). Թիֆլիս, 1913, էջ՝ 729: Մեր կարծիք ով, Ճոլին թե՛

նկարագրական, թե՛ ազգագրական, և թե՛ իմաստաբանական մակարդակներում ընդհանրություններ ունի գյուղատնտեսության մեջ լայնորեն տարածված նախնական գործիքներից մեկ՝ ցաքանի (ձեռքի փոցխ) հետ: Ցաքանն իր արտաքին տեսքով նման է լաթեր հագած ավելին (ճոլի ծիսական տիկնիկին) և հաստ ճյուղին փաթաթված բարակ ճյուղերն ամբողջությամբ համապատասխանում են գավառական բառարանի ճոլոլակ բառի բացատրությանը՝ «պոչի պես ետևեն կպած ու կախված» (Հր . Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. IV, Երևան, 1979, էջ՝ 446, Ստ.Լիսիցյան. նշվ. աշխ., էջ՝ 128): Սերմը հողով ծածկելիս ցաքանը կապվում է լծին և շարժվում՝ անցնելով ուղիղ ճանապարհ: Արցախում և Զանգեզուրում ճոլ նշանակում է ճանապարհ, ուղի: «ճոլան տյուս եկած» նշանակում է՝ ուղուց շեղված, ծուռ, անկառավարելի: Ակներև է, որ ճոլի բառը ստուգաբանորեն առնչվում է ցաքանի և լծի անցած ուղիղ ճանապարհի հետ: Կարծում ենք՝ ցաքանի և լծի կապը համադրվել է երկնքի և երկրի՝ իբրև երկու տարբեր՝ արական և իգական հասկացությունների հետ, և դեպի երկինք տանող ուղիղ ճանապարհը հետագայում խորհրդանշվել է գութանին լծված կանանց կողմից գետի հոսանքին հակառակ վար անելու ծեսով, քանի որ մարդու վաղնջական առասպելաստեղծ մտածողության երկյակ համատեքստում «հակադրությունները կարող են զարգանալ տարբեր կոդային համկարգերում» (В. Н. Т о п о р о в. Модель мира,- МНМ. Т. 2, М., 1982, с. 162):

Ճոլի ծիսական երգի անձրևաբե՞ր, թե՞ անձրևախափան լինելու վերաբերյալ գոյություն ունեն տարբեր աղբյուրներ և գիտական տարբեր կարծիքներ.

1. Ըստ Գր. Ղափանցյանի անձրևաբեր ծիսական ճոլի երգը ջրի աստվածության հնագույն պաշտամունքի հիշողությունն է՝ պահպանված Ղարաբաղի հայոց կենցաղում (*Г. Капанцян. Историко - лингвистические труды. Т. II, Ереван, 1975, с. 321-322*):

2. Բանահավաք Կ. Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան) ճոլին համարում է անձրևաբեր երգ, որը կատարվել է երաշտ տարին աստծո գութը շարժելու և անձրև բերելու նպատակով (38 Տմբլաչի Խաչան. Զուռնա – Տմբլա, գ. Բ, Թիֆլիս, 1907, էջ՝ 67):

3. ճոլիի անձրևաբեր նմուշներ են պահպանվում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (ՀԱԻԲԱ, FFIV: 5173,01 - 5173,01, 5091,01 - 5094,00 (Ս. Վարդանյանի հավաքածու)):

4. Էմինյան ազգագրական ժողովածուն ճոլին նույնացնում է անձրևաբեր Նուրինի և նրա տարբերակների հետ իբրև նմուշ մատնացույց անելով «Բյուրակնում» լույս տեսած անձրևաբեր «Պուպլատրկին » երգը (ԷԱԺ. էջ՝ 729, 816, Սրապեան. Պուպլատրկին. — «Բիւրակն», 1899, էէ 441):

5. Վերոհիշյալ աղբյուրի հետ համերաշխ է նաև Մ. Աբեղյանը. « Նուրինը կոչվում է, նայելով բարբառներին՝ Ճոլի.. .» (41 Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ՝ 169):

Խնդրո առարկա հարցի շուրջ տրամագծորեն հակառակ կարծիք է հայտնում ազգագրագետ Ստ. Լիսիցյանը: Ցանքսերի ծլելու համար վտանգավոր տնական և հորդ անձրևները դադարեցնելու նպատակով ղարաբաղցի կանայք ու աղջիկները խաչաձև կապված փայտիկներից տիկնիկ

էին պատրաստում, կնոջ շորեր հագցնում և բակից բակ ման ածելով երգում էին «Չոլի» երգը (Ստ. Լիսիցյանը ճոլին անվանում է Չոլի (Ստ. Լիսիցյան. Լեռնային Ղարաբաղի հայերը. ՀԱԲ, 12. 1981, էջ՝ 62)):
Վ. Բդոյանը ևս նախապես Ճոլին համարում է հարատև անձրևը դադարեցնող խրտվիլակ և ապա, շարադրանքի ընթացքում, Ճոլին դիտում իբրև Նուրինի տարբերակներից մեկը՝ հանգելով դրանց նույնացմանը, «ճոլին, ինչպես տեսանք, կապված է խոնավության, անձրևաջրով շաղախված հողի հետ: Այս իմաստով էլ Նայ > Նար > Նուրին – Ճոլի նույնն են» (Վ. Հ. Բդոյան. նշվ. աշխ., էջ՝ 496):

«Նուրինն» իր փոփոխակներով հանդերձ անձրևաբեր երգ է, և եթե ազգագրագետը «ճոլին» համարում է զտարյուն անձրևախափան երգ, ուրեմն անձրևախափան Ճոլին չէր կարող համարվել անձրևաբեր Նուրինի տարբերակներից մեկը, որովհետև դրանք ծիսական հակադիր գործառույթ են
կատարում (մեկն արև է կանչում, մյուսն՝ անձրև): Այս կարծիքը, ըստ էության, որոշակի հակասություն է պարունակում իր մեջ, որը կփորձենք հանգուցալուծել բանահյուսական նյութի օգնությամբ: Եթե Ճոլիի գաղտնագրված նմուշները կարող են կասկած հարուցել նրա անձրևաբեր կամ անձրևախափան լինելու վերաբերյալ, ապա մեր ձեռքի տակ եղած տպագիր և ձեռագիր աղբյուրները ցրում են այդ կասկածները: Հովի. քահանա Մանդակունու Առաջաձորում գրառած
Ճոլիի փոփոխակը բացահայտ անձրևաբեր երգ է՝ «Ջուր բերէք գլխին ածինք» (ՀԱԻԲԱ, FBI: 1075,01- 1075,01 (Տ. Նավասարդյանի ֆոնդ, Հովի. քահ. Մանդակունու հավաքածու)), իսկ Ճոլիի Գորիսի տարբերակն ունի ընգգծված անձրևախափան բնույթ. «Ծրլծրլօցան էք բրզարալ, կրթկրթօցան էք բրզարալ» (Ստ. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ՝ 130): «Ճոլի» ծիսական երգի թե՛ անձրևաբեր և թե՛ անձրևախափան նմուշներ են պահվում (ասացողների ընդարձակ բացատրություններով հանդերձ (բացատրությունները գաղտնազերծում են ծիսական երգի բնույթը) Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (ՀԱԻԲԱ, FFIV: 5173, 01 - 5173,01, 5067,01, 5067,01, 5067,02 - 5067,02, 5091,01-5094.00 (Ս. Վ արդանյանի Հավաքածու) , Արցախ:)
Դիտարկված նյութը հաստատապես համոզում է, որ Նուրինի տարբերակներից մեկը համարվող Ճոլին նույնպես հանդես է եկել որպես ծիսական կրկնակի գործառույթի կրող: «Ճոլի» ծիսական երգի Գորիսի տարբերակը սկսվում է սգավոր տիկնիկի նկարագրությամբ.

Ճօլի, Ճօլի, մէր Ճօլի, ’
Սըվը քէթկալ, մէր Ճօլի,
Սըվը լէչակ մէր Ճօլի... (Ստ. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը, էջ՝ 130)
Ըստ երևույթին, Ճոլին ժողովրդական հավատալիքներում առկա արեգակ - աղջիկն է, որը հալածվելով վիշապից՝ ընկել է ծովը: «Ճօլին յէնկավ ծօվը...» տողը, ամենայն

հավանականությամբ, աղերսներ ունի երկնքի և երկրի երկհակադիր միասնության ամենանախնական պատկերացումների հետ, ըստ որի ծովը համարժեք է ստորին աշխարհին և, իբրև, քառսային
ջրերի տարերք, սահմանափակում է տիեզերքը բոլոր կողմերից (*В. Н. Топоров . Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции,— "Историко-филологический журнал", 1977, № 3, с. 102.*):
«Ծովը ծիրանի դառավ, չորս կողմը հիլի դառավ...» արտահայտությունը քննարկվող ծիսական երգերում հանդիսպող եզակի պատկեր է, որի երկրորդ մասը՝ շուրջբոլորը հայելու վերափոխվելը, համարժեք է մահվան: Եվ որովհետև դիալեկտիկայի կանոններով գործող առասպելական մտածողության համաձայն յուրաքանչյուր արտացոլում երևույթի հակոտնյա հայելային երկվորյակն է (*Л. А. Абрамян. Первобытный праздник и мифология. Ереван, 1983, с. 149- 150*), ուրեմն ջրային հայելու մեջ արտացոլված անկենդան արևը (Ճոլին) երկնային լուսատուի ծիսական կրկնորդն է, որն էլ ընդգծում է հակադիր աշխարհի առկայությունը (*հայելու միջոցով այս չխարհից հեռանալու մոտիվն առկա է հայկական հեքիաթներից մեկում, որտեղ թագավորի աղջկա ուղարկած խոշորացնող հայելու մեջ իր կրկնակը տեսնելով օձը վախից նետվում է ծովն ու մահանում (Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. 5, Երևան, 1966,N17*): Ցայսօր կենցաղավարող ուշ երեկոյան հայելու մեջ չնայելու ե հանգուցյալի տանը հայելիները մեկուսացնելու սովորությունը բացատրում է հենց այս հավատալիքով:) Քանի որ ըստ նույն դիալեկտիկայի կանոնների կենդանի և անկենդան երեկույթների միջև գոյություն ունի մի ինչ-որ չափակցելի բան (*ժառանգորդում*) և հայոց
տիեզերածին պատկերացումներում երկինքը հաճախ դիտվում է իբրև ծով («*ծիրանի ծով*»), որտեղից սկսվում է ծնունդը (ԱՀ, I, էջ՝ 350: ԱՀ II, էջ՝ 196, Գ. Սրվանձտյան. Համով-Հոտով. Կոստանդնուպոլիս, 1884, էջ՝ 11, Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ. Երևան, 1981, էջ՝ 24-25, 38-40, Խորենացի, Ա, ԼԱ:), հետևաբար ծովն ընկած Ճոլին կարող է վերածնվել, վերականգնել աշխարհի խախտված կարգուկանոնը, ինչը և կազմում է ծիսական արարողության խորհուրդը:

Ծիսական երգի ավարտին Նուրինի և Գոդիի պես Ճոլին ստանում էր իր բաժինը՝ յուղ, ձու, ալյուր և այլն, ու «Ճոլիի» գրեթե բոլոր նմուշներն ավարտվում են հասարակական նվիրատվությամբ կազմակերպված ցասման հացով (մատաղ), որովհետև դարեր շարունակ ժողովուրդը տիրոջ գութը
շարժելու ամենավստահելի միջոցը համարել է զոհաբերությունը.
Ծու պերեքյ թաթին տինինք,
Եղ պերեքյ վարսը քսինք,
Մեր Ճոլու փայը տվեք,
Օտինք, խմինք, քեֆ անինքյ: (Տմբլաչի Խաչան. նշվ. աշխ., գ. Բ, էջ՝ 67)
Ընդունելով գավառական բառարանի բացատրությունը «Ճոլոլ –Ճոլոլ» Ղրբ. փունջ - փունջ կապած» (ԷԱԺ. Հ. Թ, էջ՝ 729), որով կարելի է Ճոլին կապել ցաքանի, կանաչի փնջի հետ, միաժամանակ հակված ենք կարծելու, որ Ճոլին անձրև կանչելու կամ դադարեցնելու հավատալիքների մեջ չափազանց մեծ դերակատարություն ունեցող

քարն է (*Առանձին ժայռերի և մանր քարերի պաշտամունքը ժամանակի ընթացքում հանգեցրել են անձրևաբեր աստվածությունների կերտմանը, որոնց ժողովուրդը «ուշապ» անունն է տվել: Այդ մասին մանրամասն տես՝Н. Я. М Э թ թ И Я. И. СМИРНОВ. Вишапы. Труды Государственной академии истории материальной культуры, Л., Т. 1, 1931; Б. Б. Пиотровский . Вишапы. Каменные статуи в горах Армении. Л.*, *1939.*), քանի որ «քարը կայծակի սիմվոլն է, իսկ կայծակն ամպրոպային աստծու զենքը» (Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ՝ 168):

Ի դեպ, ցուցանշական են անձրևաբերության և անձրևադադարի քարի հետ սերտորեն կապվող
պաշտամունքի հետքերը.

1. «Անձրևաբերության նպատակով խաչքարերի վրա ջուր էին լցնում»(ԱՀ, X, 1903, էջ՝ 201):
2. «Երբ շարունակ անձրև է գալիս և արև չի ծագում, քահանայի տանից ավել են գողանում և չոր քարի վրա գրած կրակ տալիս»(Եր. Լալայան. նշվ. աշխ., հ. 2, էջ՝ 432):
3. Վարանդայում քարի վրա ջուր լցնելիս անմիջապես անձրև էր տեղում, իսկ քարի տակ կրակ վառելիս դադարեցվում էր անձրևը(ԱՀ, II. էջ՝ 191 - 192):
4. Քարի վրա կախարդական որևէ բան են գրում ու ջուրը նետում(Գ. Սրվանձտյա. Մանանա, էջ՝ 116), որոշակի քարերի տեղաշարժը բնորոշ է նաև այլ ժողովուրդների (Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ՝ 168. E. H. Meyer. lnd [ogermanische| Myth (en.II, Achilles. Berlin, 1887), S. 539)
5. Որևէ ճգնավորի գերեզմանից երկյուղածությամբ իջեցված քարը խաչով-խաչվառով, քահանաներով և ահագին բազմությամբ հանդիսավոր նետում են ջուրը, և անմիջապես անձրև է տեղում (Եր. Լալայան. նշվ. աշխ., հ. 2, էջ՝ 431):

Հետաքրքիր է նկատել, որ «երբ բավականաչափ գալիս է անձրև, գնում, այդ քարը հանում են ջրից, որպեսզի անձրևը դադարի (Նույն տեղում: Ստ. Լիսիցյան. Զանգեզուրի հայեր, էջ՝ 129): «Ճոլի» ծիսական երգի երկակի բնույթը բացահայտվում է արարողության ժամանակ քարի կատարած երկհակադիր գործառույթով. քարը ջուրը ձգելը անձրև կանչելու ուղին է, քարը ջրից հանելը՝ անձրևը դադարեցնելու ուղին:

Սույն բանաձևը երկու դեպքում էլ կիրառելի է. նայած թե մթնոլորտային պայմաններն ինչպիսի հասարակական պահանջ են ձևավորել՝ անձր՞և, թե՞ արև: Այս համատեքստում Ճոլի ասելով կարելի է հասկանալ կրկնակի գործառույթով օժտված տիկնիկ – տիրուհի, որը միջնորդ է դիտվել մարդկանց և աստվածների միջև, մանավանդ որ, ըստ հայերի և իրանցիների վաղնջական պատկերացումների՝ արևին վերադրվել է միջնորդի, բարեխոսի և անգամ դատավորի դեր: (Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ՝ 25):

Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի վերլուծական ընդհանուր քննությունն ամփոփելով

ասենք, որ մթնոլորտային երևույթների տարերային դրսևորումները հնագույն ժամանակներից հայոց մեջ ձևավորել են պաշտամունքային արարողություններ ու ծիսական երգեր, որոնց օգնությամբ ժողովուրդը ձգտել է վերականգնել բնության ու

հասարակության ներդաշնակությունը: (Ուշագրավ է, որ եթե հնում մարդը փորձում էր մթնոլորտային երևույթները կարգավորել ծեսերով, ապա այսօր գիտությամբ: Վերջերս Ռուսաստանի դաշնության Արտակարգ իրավիճակների նախարարության բարձր տեխնոլոգիաների և գիտության դաշնային կենտրոնի կողմից ստեղծվել է իոնային գեներատոր, որի միջոցով կարելի է և՛ անձրև բերել, և՛ դադարեցնել այն ("*Голос Армении", 17.IV.2004): Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկիակադիր ընկալումների շուրջ 227*):

Բերված նյութը վկայում է, որ մթնոլորտային երևույթների հակադրամիասնություն, տրամագծորեն հակառակ ծեսերում նույնատիպ միջոցների գործագրումը նպաստել են երկակի գործառույթով օժտված ծիսական երգերի ստեղծման (և՛ անձրևաբեր, և՛ անձրևախափան՝ Գոդի, ճոլի):

Համատիեզերական երևույթների ու պատկերացումների երկիակադիր ընկալումներից բխող միաժամանակ և՛ անձրև բերող,՛և դադարեցնող քարի հավատալիք այն կարևոր հանգուցակետն է, որի միջոցով բացահայտվում է ծիսական «Ճոլի» երգի երկակի բնույթը: Հավանաբար, ցարդ գոյություն ունեցող հակասական թվացող գիտական մեկնաբանությունները պայմանավորված են նույն ծեսի երկակի դրսևորումներից մեկը գրառելու կամ հղելու հանգամանքով: Կարծում ենք, որ երկիակադիր ծիսական պատկերացումների վերլուծության այս համալիրում հանգուցալուծվում
են իրարամերժ թվացող մեկնաբանություններ:

Օգտագործված գրականություն

- ✓ «Հայկական սովորություններ» Քաջբերունի 1903թ.
- ✓ «Պատկերազարդ տոնացույց» Մ. Ղազարյան, Ա. Համբարձումյան
- ✓ «Ազգային տոներ» Ա. Սարգսյան
- ✓ «Հայ ժողովրդական տոները« Հ. Խառատյան
- ✓ «Հայ ժողովրդական խաղեր» Վ. Բդոյան
- ✓ «Ներքին Բասենի ազգագրությունը» Գ. Ա. Հակոբյան
- ✓ «Զատիկ» Ռ. Հարոյան
- ✓ «Տոնացույց» Ն. Մովսիսյան